ԶՎԱՐԹՆՈՑ

(Դիտողություններ)

ԿԱՐՈ ԶԱՖԱՂԱՐՅԱՆ

Զվարթնոցի եռահարկ բոլորակ տաճարը միջնադարյան Հայաստանի ճարտարապետական գլուխգործոցներից մեկն է և իր կազմությամբ ու ձևով միակը չի եղել Հայաստանում։ Նրա օրինակով Մեծ Հայքում և հարևան երկրներում կառուցվել են մի քանի հուշարձաններ միջնադարի տարբեր ժամանակներում։

ա. VII դարում Ներսես Շինողը Տայքի Իշխան գյուղում կառուցեց զվարթնոցատիպ մի տաճար, որ վրաց թագավոր Դավիթ Շինարարի ձեռագործություններով պահպանվել է մինչև մեր օրերը։

բ. Բագրատունի Գագիկ Ա թագավորը հռչակավոր ճարտարապետ Տրդատին պատվիրեց վերարտադրել Զվարթնոցն Անի քաղաքում, որի կառուցումն ավարտվեց 1000 թվականին։

գ. Զվարթնոցատիպ մի տաճար կառուցված է Բանա գյուղում։ Վերջինս եկեղեցիների մեջ ամենից լավ պահպանվածն է և որոշ գաղափար է տալիս այդ տիպի հուշարձանների ընդհանուր տեսքի մասին։ Այս տաճարը ևս պատկանում է X դարին։

դ. Նման բրիստոնեական մի տաճար էլ վերջին տարիներս հայտնաբերվել է Զաքաթալայի մոտ, Լեկիտ գյուղում (Ագրբեջան), որ թեև բոլորակ է, բայց դրսում երկու ավանդատուն ունի՝ իր արևելյան կողմի վրա, և ներքին սյունաշարքերը կազմում են ութանկյուն բազմանկյունի[1]։

Զվարթնոցը վաղուց ի վեր մտել է համաշխարհային դիտական գրականության մեջ իբրև հայկական հուշարձան։ Իբրև այդպիսին նրա մասին մեծ գովեստով են խոսում ճարտարապետության պատմաբաններ և հնագետներ պրոֆ. Սարգիզովսկին, ակադ. Ն. Մառը, ակադ. Հ. Օրբելին, ճարտարապետ Թ. Թորամանյանը և շատ ուրիշներ։

Սակայն, գիտության կողմից ընդունված և բազմաթիվ փաստերով հիմնավորված այդ տեսակետին հակառակ, Զվարթնոցի մասին միանգամայն անհիմն և սխալ կարծիք է հայտնել արվեստագետ Գարեգին Լևոնյանը[2]։ Չհերքված սխալ կարծիքը կարող է ոմանց թյուրիմացության մեջ գցել[3]։

Լևոնյանը Զվարթնոցի տաճարը համարում է Հայաստանի համար խորթ, հունական դավանանքի մի մկրտարան և ոչ իսկ եկեղեցի, որին նա տալիս է լատինական Բապտիստերիում կամ Կապելլա Բապտիստերիա անունը։ Նրա կարծիքով Զվարթնոցը շինված է բյուզանդական կայսր Կոստանդինի դրամով՝ հայոց ազգային եկեղեցու հիմքերը քանդելու և հայերին հունական դարձնելու նպատակով։ Լևոնյանը հիմնվելով Արիստակես եպ. Սեդրակյանի կարծիքի

---

[1] *Այս տաճարի մասին* „Всеобщая история архитектуры" *(1958) գրքի 468 էջում Ա. Սալամգազեն գրում է. «Լեկիտի տաճարն իր տիպով և կառուցման ժամանակով մոտիկ է Հայաստանի (Զվարթոց) և Վրաստանի (Բանա) նույնատիպ տաճարներին, որ մատնացույց է անում այն ժամանակ Անդրկովկասում իշխող ճարտարապետական գաղափարների ընդհանրությունը»։*

[2] *Գ. Լևոնյան, Նոր կարծիքներ Զվարթնոցի մասին, «ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», 1926, № 1, էջ 194—208։*

[3] *Պրոֆ. դ-ր Ա ռ ա ք ել Գ. Ա ռ ա ք ել յ ա ն, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Երևան, 1959, այս սովարածավալ գրքի ճարտարապետությանը նվիրված ենթագլխում (էջ 675) մեջ է բերված նաև Գ. Լևոնյանի սխալ կարծիքը Զվարթնոցի ճարտարապետությունը բացատրելու համար։*

վրա[1], գալիս է այն եզրակացության, որ Զվարթնոցի տաճարը ոչ թե կործանվել է երկրաշարժից, ինչպես ենթադրել է Ալիշանը[2], ոչ թե քանդվել է արաբների կողմից, ինչպես այդ մասին հաղորդում են Մխիթար Այրիվանեցին և Կիրակոս Գանձակեցին, այլ փլվել ու ամայացել է հայ ժողովրդի կողմից անուշադրության մատնվելու և լքված վիճակում մնալու հետևանքով։

Գ. Լևոնյանը Զվարթնոցը կառուցող Ներսես Տայեցուն ներկայացնում է իբրև բախտախնդիր, երկդիմի կերպարանք ունեցող մի մարդ, որը խորամանկորեն գաղտնի պահելով իր դավանանքը, ձգտել է հասնելու կաթողիկոսական աստիճանի։ Լևոնյանը ենթադրում է, որ Զվարթնոցը կառուցելու ժամանակ նույնիսկ ժողովրդի կողմից «խուլ արտունջներ էլ լսվել են նոր շենքի և նրա հիմնադիր շուրջը», այսինքն՝ Զվարթնոցի և Ներսես Տայեցու անձի դեմ բողոքներ են եղել, բայց «Ներսես, իբրև քաջ դիվանագետ՝ մտքերը հանգստացնելու համար Դվինում ժողովներ է գումարում և մերժողական պատասխաններ գրում Բյուզանդիայի պաշտոնական դիմումներին» հայոց եկեղեցին բյուզանդականին միացնելու վերաբերյալ[3]։

Նշանակում է, Զվարթնոցը, Լևոնյանի կարծիքով, կառուցվել է իբրև հունական դավանանքի մկրտարան, ժողովրդի կամքին հակառակ, նրա կառուցումը առաջ է բերել դժգոհություններ, իսկ Ներսեսը խաբել է ժողովրդին՝ ներկայանալով նրան իբրև հայկական եկեղեցու ինքնուրույնության կողմնակից, որպեսզի հանգստացնի պղտորված մտքերը և անարգել կերպով շարունակի իր քայքայիչ գործունեությունը։

Աշխատենք պարզել, թե որքանով է իրավացի Գ. Լևոնյանն այդ հարցերում։

Ա. Քաղկեդոնական՞ է արդյոք Ներսես Տայեցին

Ներսեսի հունասեր լինելու և հունադավանության հակումներ ունենալու մասին գրել է Սեբեոս պատմիչը, որ ժամանակակից էր նրան, մոտիկից էր ճանաչում իբրև Բագրատունյաց եպիսկոպոս, նրա ենթականերից մեկն էր։

Սեբեոսն իր պատմության մեջ համառոտակի կանգ է առնում Ներսես Տայեցու կենսագրական տվյալների վրա և նշում, որ Ներսեսը ծնվել է Տայքի Իշխան գյուղում, մանկության հասակում հունական կրթություն է ստացել, այնուհետև զինվորական է դարձել և այդ միջոցին շրջել է աշխարհը. հետո ավելացնում է, որ նա հույների քաղկեդոնական դավանանքին կողմնակից էր, բայց իր այդ միտքը թաքուն էր պահում, մինչև որ հասավ եպիսկոպոսության և կաթողիկոսության աստիճանին[4]։

Ինչպես արդեն ոմանք նկատել են, Սեբեոսն անաչառ չէ Ներսես Տայեցու նկատմամբ։ Նա մի քանի տեղ հակասում է ինքն իրեն Ներսեսի բարոյական կերպարը նկարագրելիս։ Նախ՝

---

[1] «Հայաստանեայց եկեղեցու պատկերահարգութիւնը», պատմական տեսություն, աշխատություն՝ Արիստակես եպ. Սեդրակյանի, մասն Ա, Ս. Պետերբուրգ, 1904, էջ 183—184։

[2] Ալիշանի Այրարատում չգտանք Զվարթնոցը երկրաշարժից կործանված լինելու մասին որևէ ակնարկ։ Ընդհակառակը. նա Այրիվանեցու տեղեկությունն է մեջ բերում Զվարթնոցը արաբների ձեռքով քանդված լինելը ցույց տալու համար։ Տե՛ս Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց հ. Ղ. վ. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 245։

[3] Գ. Լևոնյան, Նոր կարծիքներ Զվարթնոցի մասին, էջ 200—201։

[4] Սեբեոսը գրում է՝

«Եւ հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի, և ի վերայ տումարին Լևոնի։ Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեանն՝ մինչև եհաս յեպիսկոպոսութիւն յաշխարհին, և անտի կոչեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան» (Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 228)։

Քիչ հետո շարունակում է, որ Ներսեսը «Ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան, և խոհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր»։

Այնուհետև՝

«Եւ զսուրբ և զվեհիտ և զսականակիտ ազգերացն պղտորեաց զջուրս, զոր ի վաղնջուց իսկ ունէր ի միտս իւր կաթուղիկոսն, և ոչ իշխեաց յայտնել մինչև ցայն աւր» (229)։

Այսպիսով, ըստ Սեբեոսի, Ներսես Տայեցին երդվյալ քաղկեդոնական էր, բայց իր մտքերը հայտնելու համար հարմար առիթի էր սպասում։

Ներսեսի մասին մեծ գովեստով է խոսում, անվանելով նրան «Քրիստոսասէր կաթողիկոսն Ներսէս»[1], մի այլ տեղում՝ «նա էր այր առաքինի վարուք պահաւք և աղաթիւքս»։

Ներսեսից առաջ Եզր կաթողիկոսը Կողբի ազահները կաշառք տալով, համաձայնություն էր ստացել միանալու հունաց եկեղեցու հետ և Քաղկեդոնի ժողովն ընդունելու. Սեբեոսը դրան լավ ծանոթ էր և այդ մասին էլ գրել է իր պատմության մեջ։ Բայց երբ նա խոսում է Ներսես Տայեցու ակամա հաղորդության մասին, որ վերջինս մահվան սպառնալիքի տակ ընդունում է Բյուզանդիայի Կոստանդին թագավորի հետ միասին հույն episkoposի ձեռքից — մոռացության տալով Եզրին, հայտարարում է, որ առաջին անգամ Ներսես Տայեցին խախտեց հայոց դավանանքի սկզբունքները և հաղորդություն ընդունեց հույն episkoposի ձեռքից։ Սեբեոսը գրում է.

«Եվ այսպէս շարժեաց կաթողիկոսն (Ներսէս) զձչմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի, զի կալեալ էր ամենայն կարողիկոսացն եռատատուն եիմեաղրուբեամբ ի սրբոյ եկեղեցւոյն ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայսաւրս»։

Հասկանալի է, որ անտեսելով Եզրի վարմունքը, Սեբեոսն ուզեցել է դրանով մեծացնել Ներսեսի հանցանքը և ցույց տալ նրա դավաճանությունը ոչ միայն ավանդական ծեսերի, այլև հայոց եկեղեցու ինքնուրույնության հանդեպ։

Սակայն, այստեղ ևս Սեբեոսն իրավացի չէ, որովհետև ինքը պատմության մի այլ տեղում գրում է, որ հունաց Հերակլ կայսեր թոռ Կոստանտի օրով հույները նոր փորձ են կատարում հայոց եկեղեցին իրենցին միացնելու և Բագրավանցի Դավիթ փիլիսոփային ուղարկում են Հայաստան, որպեսզի հայերին համոզի հունադավանություն ընդունել։ Այդ առթիվ Ներսես Տայեցին episkoposների և նախարարների մասնակցությամբ 648 թ. ժողով է գումարում Դվինում, որին ներկա է լինում նաև Երկրի կառավարիչ Թեոդորոս Ռշտունին։ Այդ ժողովում Դավիթ Բագրավանցին ելույթ է ունենում և կոչ անում բոլոր հայերին ընդունել Քաղկեդոնի հունական դավանանքը, բայց ժողովականները Ներսես Տայեցու գլխավորությամբ, միաձայն մերժում են հույների առաջարկը և հավատո դիր են կազմում հայոց եկեղեցու դավանանքի վերաբերյալ, որի տակ իրեն հայոց կաթողիկոս, առաջինը ստորագրում է Ներսես Տայեցին[5]։

Այդ ժողովից չորս տարի անց, հունաց Կոստանս կայսրը մեծ զորքով գալիս է Հայաստան, որպեսզի ոչնչացնի Հայաստանը կամ, ինչպես Սեբեոսն է ասում «զի բարձցէ զերկիրն ի միջոյ», որովհետև նա տեղեկացած է լինում, որ հայերը դաշն են կնքել արաբների հետ։

Ներսես Տայեցին և հայ իշխանները ընդառաջ են գնում Կոստանդինոսին և խնդրում չպատժել իրենց ու չավիրել Հայաստանը։

Կայսրը, հարկավ, որոշ խոստումներ ստանալով կաթողիկոսից և իշխաններից, որոնց մասին ոչինչ չի գրում Սեբեոսը, արձակում է իր զորքի մեծ մասը և միայն քսան հազարանոց բանակով մանում է Դվին, իջևանում կաթողիկոսի տանը։

Կոստանդինը թեև պահում է իր խոստումը և կոտորած չի կազմակերպում Դվինում, բայց մի կիրակի օր պահանջում է, որ հունական ծեսով պատարագ մատուցվի կաթողիկե եկեղեցում և հայոց կաթողիկոսն ու բոլոր episkoposները հաղորդություն ընդունեն հոռոմ երեցի ձեռքից և դրանով ապացուցեն իրենց հավատարմությունը Բյուզանդիային։ Նախ՝ հաղորդություն է ընդունում ինքը՝ կայսրը, այնուհետև՝ Ներսես կաթողիկոսը և հետո էլ հայոց episkoposները

---

1 Սեբեոս, Պատմութիւն, էջ 194։

2 Անդ, էջ 228—229։

3 Եզրի դավանափոխության մասին Սեբեոսը գրել է, որ Մժեժ Գնունու առաջարկով՝

«Գնաց կաթողիկոսն (Եզր) յերկիրն Ասորեստանի, ետես զթագաւորն և հաղորդեցաւ ընդ նմա աւրինաւք։ Եւ խնդրեալ ի թագաւորէն պարգևս զաղն Կողբայ, և առեալ զպարգևն դարձաւ մեծաւ շրով ի տուն իւր։ Եվ ապա յայնմհետև նստէր ի մէջ բանակի յունաց, մինչև զաւրավարին հաճոյանալ ըստ կամաց նորա», էջ 163։

4 Սեբեոս, Պատմութիւն, էջ 229։

5 Անդ, էջ 231։

6 Այդ մասին Սեբեոսը գրում է.

«Ի անդէն անկան ի վերայ երեսաց իւրեանց կաթուղիկոսն և Մուշեղ ամենայն իշխանքն Հայոց և մեծաւ ողջանալաւք և արտասուալից պաղատանաւք խնդրեցին ողորմութիւն, զի մի ըստ նոցա յանցանացն իսպառ բարկասցի և զերկիրն կորուսցէ» (էջ 227)։

«որ կամաւ և որ ակամայն», միայն մի եպիսկոպոս, որի անունը չի հիշատակում Սերեոսը, հրաժարվում է այդ ծեսին մասնակցելուց և հաղորդություն չընդունած, աննկատելի հեռանում է եկեղեցու սեղանից ու խառնվում ժողովրդին։

Այդ մասին տեղեկացնում են Կոստանդին կայսեր, որը կանչել է տալիս այդ եպիսկոպոսին և հրամայում, որ այդ եպիսկոպոսը ևս հաղորդություն ընդունի հունական ծեսով, որը և տեղի է ունենում։

Այստեղ կարևորն այն է, որ Ներսեսը հունական ծեսով հաղորդություն է ընդունում ոչ թե իր համոզումներից ելնելով, այլ մահվան երկյուղի տակ, և դրան մասնակից են լինում նաև բոլոր եպիսկոպոսներն առանց բացառության։

Ինչպե՞ս կարող էր հայ կղերը չընդունել այդ հաղորդությունը, երբ բան հազարանոց բանակով Բյուզանդիայի կայսրը Դվին էր եկել հենց այդ նպատակով, իսկ հայոց զորքը, որ պետք է պաշտպաներ երկիրն օտարների ներխուժումից, Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ Աղթամար էր ապաստանել՝ խույս տալով բյուզանդական զորաբանակից։ Հայաստանն այդ ժամանակ մնացել էր միանգամայն անպաշտպան վիճակում։

Այդ դավանափոխության փորձը պատահական երևույթ չէր։ Բյուզանդիան վաղուց ի վեր հետևողական կերպով աշխատում էր հայերին դավանափոխ անել, որովհետև դրա մեջ նա տեսնում էր Հայաստանի միաձուլման գաղափարը Բյուզանդիային, կամ, առնվազն, հայերին բյուզանդասեր դարձնելու ամենակարճ և ամենահաստատուն ճանապարհը, իսկ դա մեծ նշանակություն ուներ Բյուզանդիայի համար, որովհետև Հայաստանը գտնվում էր Բյուզանդիայի և Պարսկաստանի արանքում և Հայաստանի քաղաքական տրամադրություններն ու ձգտումները մեծ նշանակություն ունեին այդ աշխարհակալ մեծ պետությունների համար։

Թեև հույների հետ հաղորդվելը Ներսեսի բարի կամքով տեղի ունենար, այդ պարագային նախարարական տների և գավառների եպիսկոպոսները կարող էին չմիանալ նրան, ինչպես այդ տեղի ունեցավ հիշյալ դեպքից քիչ առաջ՝ երբ կաթողիկոսի օրով։ Բայց, քանի որ Ներսեսն ու բոլոր եպիսկոպոսները բռնի ուժի ազդեցության տակ էին հաղորդվել, այդ պատճառով նրանցից ոչ որ չկարողացավ ընդդիմանալ, իսկ խույս տվող միակ եպիսկոպոսը, որ, ինչպես ճիշտ նկատել են, Սերեոսն ինքն է եղել և համենատորեն չի հիշատակել իր անունը, հայտնաբերվելուց հետո անմիջապես հաղորդվեց[2]։

Այս հարցում որոշակի կերպով պետք է տարբերենք, երկու, իրար հետ ոչ մի կապ չունեցող հանգամանքներ, որ մի շարք հեղինակներ չփոթել են։ Դրանցից մեկը դավանանքն է, կրոնական հայացքները, իսկ երկրորդը՝ քաղաքական հայացքները։

Ներսես Տայեցին իր քաղաքական հայացքներով հունասեր էր, բյուզանդական քաղաքական ազդեցության կողմնակից։ Նա գերադասում էր դաշնակից լինել Բյուզանդիային և ոչ թե արաբական խալիֆայությանը։ Դա անհերքելի է և վեճի առարկա չի կարող լինել։

Բայց որ Ներսեսը Հայաստանի ինքնուրույնության ջերմ պաշտպան էր և չէր ուզում, որ հայերը միաձուլվեն հույներին, դա ևս ակներև է, երբ քննության ենք առնում նրա գործունեությունն ամբողջովին, բնագատորեն վերաբերվելով Սերեոս եպիսկոպոսի անբարյացակամորեն հաղորդած տեղեկություններին։ Դվինի ժողովում իր կազմած հավատո գրով Ներսեսն արդեն ցույց էր տվել, որ ինքը մերժում է հունական դավանանքը և ոչ մի պայմանով չի ընդունում այն, որովհետև այդ դավանանքը քաղաքական դժվարին պայմաններում խախտում էր հայ ժողովրդի ինքնուրույնության հիմքերը և Հայաստանը կարող էր կուլ գնալ Բյուզանդիային, ինչպես այդ արդեն տեղի էր ունեցել Փոքր Հայքում։

Դրախտանակերացու մի վկայությունից երևում է, որ Սերեոսը ճիշտ չէ, երբ բախտախնդրության մեջ է մեղադրում Ներսես Տայեցուն, որն, իբրև թե, աշխատել է ամեն գնով հասնել կաթողիկոսության աստիճանին, որպեսզի կարողանա իրագործել դավանափոխության իր գաղափարը։

---

[1] Սերեոս, Պատմութիւն, էջ 229։

[2] Օրմանյանը նկարագրելով Ներսեսի հաղորդվելու դեպքը, խույս տվող եպիսկոպոսի մասին գրում է.

«Ահա՛ կա մեր կարծիքով անուղղակի հայտնություն մը էր, թե ինքը Սերեոս Բագրատունյաց եպիսկոպոսն է, առաջ հաղորդութենե խուսափող և ետքեն կայսեր բացատրություն տվող, և Ներսեսի գաղտնիքը մեջտեղ հանող եպիսկոպոսը». Օրմանյան Մ., Ազգապատում, հատ. Ա, կ. Պոլիս, 1912, էջ 723։

ժամանակ, երբ [illegible]

դեռևս թաղված չէին։ Սակայն, տեղի տալով նախարարների և հոգևոր դասի

ոստիկանությանն ու խնդրանքներին, ի վերջո ստիպված է լինում ընդունել կախ

զումը։

Կարծում ենք, այս բոլորից հետո խոսք անգամ չի կարող լինել Ներսեսի դաշ

թյան վերաբերյալ կամ Դ. Լևոնյանի որակումով, նրա՝ խորամանկ և բախտախն

լինելու մասին։

Այդ բանը հաստատվում է նաև նրանով, որ Թեոդորոս Ռշտունու հալածանքների

երբ Ներսեսը վերադառնում է Հայաստան և հաստատվում իր աթոռի վրա, այլևս ոչ մ

առիթ չի տալիս հայոց դավանանքի սկզբունքները խախտելու։ Մինչդեռ եթե նա կա

նա կարող էր ավելի համարձակորեն գործել բաղկեդոնական դավանանքի օգտին, որ

Թեոդորոս Ռշտունին այլևս կենդանի չէր և չէր կարող հալածել նրան։

Ներսես Տայեցին իր ժամանակի խոշոր դեմքերից մեկն էր։ Նա ոչ միայն կաթողիկո

այսինքն հայոց եկեղեցու գլուխ, այլև մեծ արվեստագետ ու շինարար։

Չպետք է մոռանանք, որ նա բացի Զվարթնոցից կառուցել է նաև Դվինում ս. Սարգ

եկեղեցին, որի տեղը մինչև այժմ անհայտ է մնում, Խորվիրապի եկեղեցին, որ XVII դարում

երկրաշարժից հիմնահատակ կործանվեց և նրա տեղում այժմ գոյություն ունեցող անճաշակ

տաճարը շինվեց։ Ներսեսը կառուցել է նաև իր հայրենի Իշխան գյուղի զվարթնոցատիպ եկեղեցին, նորոգել է Էջմիածնի վանքը և այդ բոլորի, ինչպես նաև մեզ անհայտ այլ շինարարական աշխատանքների համար իր ժամանակակիցներից ստացել է Սինոր պատվանուն, որին չի արժանացել հին ժամանակների և ոչ մի կաթողիկոս։ Եվ իրոք, հին մատենագրության մեջ Ներսես Տայեցին հայտնի է ոչ այնքան իր կրոնական եկեղեցական գործունեությամբ, քանի այդ հարցերում էլ զգալի դեր է խաղացել, որքան առավելապես շինարարական աշխատանքներով։

Ը. Զվարթնոցի տաճարը խո՞րը էր Հայաստանի նարտարապետության համար և նա հայերի կողմից լրված լինելու հետևանքո՞վ է կործանվել

Արվեստագետ Գարեգին Լևոնյանի այն կարծիքը, թե Զվարթնոցն իր ձևերով խորթ հուշարձան է եղել Հայաստանի համար, կառուցվել է Արևմտյան Եվրոպայի օրինակով իբրև սոսկ մկրտարան, թե տեղի հայ բնակիչները դեմ են եղել այդ տաճարի կառուցմանը, ուստի լքել են այն և դրա հետևանքով է, որ ավերվել ու կործանվել է տաճարը — բոլորովին չի հաստատվում հին մատենագիրների տվյալներով։ Ընդհակառակը, հին մատենագիրներից շատերը Զվարթնոցի կառուցումը համարել են խոշոր երևույթ և գովերգել են այն։ Ամենահամառոտ ժամանակագրական երկասիրությունների մեջ իսկ Զվարթնոցի կառուցումը հիշատակված է իբրև ժամանակի խոշորագույն երևույթներից մեկը։ Այսպես օրինակ՝ Ներսեսին ժամանակակից Սեբեոսը, որ, ինչպես տեսանք, նրա բարեկամներից չէր, Զվարթնոցի կառուցման մասին գրում է.

«Եվ շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և շքեղ զարմանալեաւ, արժանի աստուածային պատուոյն՝ որում նուիրեցաւ»[2]։

IX դարավերջի և X-ի սկզբի պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին, որ Զվարթնոցը տեսել է կանգուն և շեն վիճակում, նրա կառուցման մասին գրում է՝

«Գեղեցիկ իմն մոլութեամբ զնէ ապա հիմն մեծ և հուշալի բազմապայծառ յարկի տաճարն Աստուծոյ՝ ըստ անուանակրութեան սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Քրիստոսի»[3]։

---

[1] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 83։

[2] Սեբեոս, էջ 192։

[3] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց», էջ 83։

Դրասխանակերտցին ասաջ դնալով տաճարն անվանում է աստուածակերտ, իսկ միջնադարյան հասկացողությամբ այդպես կարելի էր անվանել ամեն ինչով կատարյալ, ամենաբարձր արժանիքներ ունեցող կառուցվածքը և ոչ թե օտար ու ժողովրդի կողմից լքված մի մկրտարան։

Ասողիկ պատմագրի (X—XI դդ.) մոտ գտնում ենք.

«և զկնի Եզրի յաջորդէ կաթողն Ներսէս Եպիսկոպոս Տայոց։

Սա շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ վիրապին յԱրտաշատ, և զմիւս ևս հրաշապայծառ եկեղեցին զսուրբ Գրիգոր ի Վաղարշապատու առապարին, գանազան յօրինուածով»[1]։

Ժամանակագիր Սամուել Անեցին (XII դ.) 808 (654) թվականի տակ Ներսեսի մասին գրում է.

«Հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր, զարմացուցիչն տեսողաց»[2]։

Կիրակոս Գանձակեցին (XIII դար) ասում է.

(«Զնեռսէս) շինեաց և զսուրբն Գրիգոր, զարմացուցիչն տեսողաց, որ յեռոյ աւերեցաւ ի տաճկաց»[3]։

Մխիթար Այրիվանեցին (XIII դար) իր ժամանակագրության մեջ 641 թվականի տակ գրում է.

«Օ՛ինողն Ներսէս շինէ զառապարի սուրբ Գրիգորն՝ զզարմացուցիչն տիեզերաց, որ քակեցաւ ի տաճկաց»[4]։

Վերջապես, Վարգան պատմիչը (ԺԳ դար) իր տեղեկությունները բաղելով Դրասխանակերտցուց, Զվարթնոցի կառուցման մասին գրում է հետևյալը՝

«և արկանէ հիմն տաճարին մեծի յառապարի յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, և զկնէ ի ներբոյ չորից սեանցն զհատարակ նշխարս սրբոյն Գրիգորի, և զգլուխն ի գգրոցի եղեալ պահէ ի պէս բժշկութեան ախտաժեռաց»[5]։

Ինչպես տեսնում ենք այս մեջբերումներից, Զվարթնոցի տաճարը ոչ թե խորթ և օտար է համարվել հին ժամանակներում, այլ մեծարվել ու բարձր է գնահատվել. նրան կոչել են տիեզերի զարմանք, չքնաղ, զարմանալի, հրաշապայծառ, աստվածային պատվի արժանի, աստվածակերտ։

Տաճարի հեղինակությունն ավելի բարձրացնելու, նրան առավել զորություն վերագրելու նպատակով հորինել են Գրիգոր Լուսավորչի ոսկորները Զվարթնոց բերելու և գմբեթակիր չորս մույթերի տակ թաղելու պատմությունը, որին, սակայն, ծանոթ չի դեպքերին ժամանակակից Սեբեոսը։ Այդ մասին ոչինչ չգիտի նաև VIII դարի պատմագիր Ղևոնդ Երեցը, որ գրել է արաբների շրջանի պատմությունը մինչև 788 թվականը։ Նա Զվարթնոցի մասին միայն մի միջանկյալ նախադասություն ունի, այն էլ հասկացնելու համար, թե խոսքը վերաբերում է այս Ներսեսին, որ կառուցել է Զվարթնոցի ս. Գրիգոր եկեղեցին։

«Քահանայապետն Հայոց Ներսէս, շինող սրբոյն Գրիգորիս»[6]։

Լուսավորչի ոսկորները Զվարթնոց բերելու մասին առաջին անգամ գրել է IX դարի վերջի և X-ի սկզբի պատմագիր Դրասխանակերտցին։

---

[1] «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Բ, տպ. ՍՊբ, 1885, էջ 88—89։

[2] «Սամուելի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 83։

[3] «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1910, էջ 58։

[4] «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լույս ընծայեաց Մկրտիչ Էմին», Մոսկվա, 1860, էջ 50։

[5] «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 67։

Գրիգոր Լուսավորչի ոսկորները Զվարթնոց փոխադրելու մասին գրել են նաև Դրասխանակերտցին (էջ 84) և Մովսես Կաղանկատվացին (ի լույս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860), էջ 137։

[6] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Բ տպ. ՍՊբ, 1887, էջ 14։

Նշանակում է, այդ ավանդությունը հորինվել է Դրասխանակերտցուց առաջ և Ղևոնդից հետո, այսինքն IX դարում[1]։ Հետագայում այդ ավանդությունը կրկնել են Աղվանից պատմության հեղինակ Մովսես Կաղանկատվացին և Վարդան վարդապետը։

Այն մասին, որ Զվարթնոցը մեծ արժեք է ներկայացնում հայկական ճարտարապետության համար, գրել են արդի գիտնականներից շատերը։

Թորամանյանը Զվարթնոցի մասին իր մի հոդվածում գրել է.

«Հուստինիանոս, երբ բյուզանդական արվեստի գլուխ գործոց ս. Սոփիան կանգնեց, ինքնակալն էր 64 նահանգներու, որոնց մեկին—Եգիպտոսի մեկ տարվան տուրքով զարդարվեցան տաճարի ներքին շարժական զարդերը։

Իսկ Հայաստանը, հաղիվ հավասարվող Բյուզանդիայի մեկ նահանգին, կանգնեց հայ ճարտարապետության գլուխ գործոց Զվարթնոց մը, որը թեև շատ հեռու կմնա ս. Սոփիայի համար թափված ոսկիի կույտերեն յուր նյութական արժանիքով, այնուամենայնիվ, իբրև հանճարի անորինակ հզորում, ճարտարապետության մեջ իբրև չնաշխարհիկ նմուշը միշտ պիտի մրցի ս. Սոփիայի հետ՝ յուր արվեստագիտական բարձր արժանիքներով»[2]։

Մի այլ տեղում Թորամանյանը նշում է, որ Զվարթնոցի շինարարական օրենքները տեղական են և ցույց տալիս, որ եթե մինչև VII դարը հայոց ճարտարապետության մեջ գերիշխող ձևերը հունա-հռոմեական սելլաֆների և բազիլիկների հետ են առնչվել, Զվարթնոցով և մի շարք այլ հուշարձաններով Հայաստանը շեղվեց արևմտյան ճարտարապետության ավանդական ձևերից և ստեղծեց մի ոճ, որ ավելի արևելյան՝ փորբասիական հատկանիշ ուներ։ Դրան հետևեցավ Հայաստանի բազիլիկատիպ շենքերը ևս այլափոխման ենթարկվեցին տեղական ճաշակի համաձայն և նրանց կառուցվածքի մեջ բազիլիկների լոկ հիշողությունը մնաց[3]։

Բազմանկյուն և բոլորակ շենքեր իհարկե գոյություն են ունեցել Բյուզանդիայում, Սիրիայում և ուրիշ տեղերում, շատ ավելի հին ժամանակներում, քան Զվարթնոցը։ Այդ ամենն իր շրջադայությունների ընթացքում, անշուշտ, տեսել և ուշադիր կերպով ուսումնասիրել էր Ներսես Տայեցին դեռևս զինվորական եղած ժամանակ։ Հավանաբար հենց այդ ժամանակ էլ նրա մտքում ծագել էր բոլորակ շենքեր կառուցելու գաղափարը. բայց դա տվյալ դեպքում կարևոր չէ, որովհետև բոլորակ շենք կառուցելու գաղափարը չէ, որ վերագրվում է Ներսես Տայեցուն, այլ բոլորակ (ավելի ճիշտ բազմանկյունի) հուշարձանի այն կոնստրուկցիայի մտահղացումը, որն ունի Զվարթնոցի տաճարը և նրա նմանությամբ կառուցված մյուս եկեղեցիները։ Ներսեսը ոչ թե ընդօրինակեց արդեն գոյություն ունեցող բոլորակ շենքերը, այլ մշակեց մի տիպ իր կոնստրուկտիվ տարրերով, որ մինչ այդ անծանոթ էր հայկական ճարտարապետության և. որ գլխավորն է, ոչ միայն պահպանեց հայկական ոճն իր բոլոր հատկանշական կողմերով, այլև հասցրեց այն մոնումենտալության բարձր աստիճանին։

Թեև Զվարթնոցի տաճարի ազդեցությունը հետագայի ճարտարապետության վրա մինչև օրս մանրամասնորեն չի ուսումնասիրված, բայց առանց վարանելու կարող ենք պնդել, որ այն մեծ է եղել ինչպես կառուցողական արվեստի, քանդակագործության, նույնպես և տեխնիկա-

---

1 Այդ ավանդության հիման վրա պեղումների ժամանակ Խաչիկ վ. Դաղյանը մինչև հիմքերի տակը քանդել է Զվարթնոցի տաճարի հյուսիս-արևմտյան մույթը՝ Լուսավորչի ոսկորները գտնելու համար։ Այնտեղ ոսկորներ չի գտել, բայց ոչնչացրել է տաճարի չորս մույթերից մեկը և եթե պեղումներին մասնակից չդառնար ճարտարապետ Թորոս Թորամանյանը, Զվարթնոցի տաճարը մեծ չափով կկորցներ իր գիտական արժեքը։

Այդ մասին տե՛ս Թորոս Թորամանյանի «Խաչիկ վարդապետի պեղումների գիտական արժեքը», որ տպագրված է հեղինակի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» աշխատությունների երկրորդ ժողովածուում, Երևան, 1948, էջ 288—290։

Թ. Թորամանյան, Զվարթնոցը գեղարվեստի պատմության մեջ. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. Ի ժողովածու, էջ 77։

3 Վերջերս Մոսկվայում լույս տեսած ճարտարապետության ընդհանուր պատմության մեծածավալ գրքի առաջին հատորում, որ հրատարակել են ՍՍՌՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի գիտական ճարտարապետները, Զվարթնոցի մասին գրված է՝

«Զվարթնոցը համաշխարհային արժեքի հուշարձան է և օտարերկրյա օրինակներից տարբեր իր առանձնահատուկ կոմպոզիցիայով հանդիսանում է օրինաչափական մի բայլ Հայաստանի ճարտարապետական մտքի զարգացման մեջ VII դարում»։

կան միջոցառումների տեսակետից։ Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ ազդեցություններ տարածվել է նաև Հայաստանի սահմաններից դուրս[1]։

Զվարթնոցի ճարտարապետական մտահղացումը Ներսես III-ը նախապես մարմնավորել էր իր ծննդավայրում, Տայքի Իշխան գյուղում, հետևապես Զվարթնոցը կառուցելու միջոցին նա արդեն որոշ փորձ ուներ այդ ոճով շենք բարձրացնելու, որը մեծ չափով դյուրացնում էր նրա աշխատանքը։ Դ. Լևոնյանը, որպեսզի ապացուցի Զվարթնոցի ճարտարապետության հայերի համար խորթ ու օտար լինելը, Արևմտյան Եվրոպայից հիշում է Պոմպեյի ու Լատերանի ս. Հովհաննես մկրտարանները և մի քանի այլ բոլորակ շինություններ Ռավեննայից, Պիզայից ու Ֆլորենցիայից։ Նա հայտարարում է, որ դրանք հանդիսացել են Զվարթնոցի նախատիպ։ Սակայն, այդ շենքերից և ոչ մեկն իր կառուցվածքով Զվարթնոցի մոտավոր նմանությունն իսկ չունի և երբեք նրա նախատիպը չէր կարող հանդիսանալ, մանավանդ, որ նրանց մեջ կան այնպիսիները, որոնք կառուցված են Զվարթնոցից շատ ուշ՝ XII դարում։

Այստեղ կարևորը ոչ թե շենքի բոլորակ լինելն է, որի վրա ուշադրություն է դարձրել արվեստագետ Լևոնյանը[2], այլ կառուցվածքի համակարգը, կոնստրուկցիան, որ բոլորովին աչքաթող է արել նա։

Արվեստագետ Դ. Լևոնյանն իր հիշյալ հոդվածի մեջ հայտարարում է, որ սկզբնական շրջանում Զվարթնոցի տաճարը «եկեղեցի չէր, կամ սոսկ եկեղեցի չէր, այլ մկրտարան կամ տաճար-մկրտության, ճիշտ համանմանը և համատիպը Արևմուտքում գոյություն ունեցող բապտիստերիումների...»[3], որ ծառայում էր հեթանոս հայերին քրիստոնյա մկրտելու համար։

Ճիշտ է, որ VII դարում և ավելի ուշ ժամանակներում Հայաստանում դեռևս եղել են հեթանոս մարդիկ և նույնիսկ ամբողջ համայնքներ, որոնց մասին հիշատակություններ են պահպանվել մեր հին մատենագրության մեջ։ Ոչ միայն Զվարթնոցը, այլև բոլոր եկեղեցիները ծառայել են մկրտության համար։ Դա նրանց պարտականություններից մեկն էր. բայց որ Զվարթնոցն իր գոյության սկզբնական շրջանում միմիայն մկրտարան է եղել և եկեղեցիների մյուս պարտականությունները չի կատարել, չի հաստատվում հին մատենագրության տվյալներով։

Սեբեոսը Զվարթնոցի տաճարը երկու անգամ անվանում է եկեղեցի («Տիենաց անդ և Եկեղեցի մի յանուն Երինաւոր Զուարթնոցն», «չինեաց Եկեղեցին բարձր շինուածովք». էջ 192). Դրասխանակերտցին անվանում է Աստծո տուն (էջ 83), որ եկեղեցիների սովորական անունն էր և մի անգամ էլ՝ եկեղեցի (էջ 88). այնուհետև, Ներսեսի մահվան մասին խոսելիս, Զվարթնոցի տաճարն անվանում է բազմապայծառ քաւարան (էջ 90), իսկ Անաստաս Ակոռեցու կաթողիկոս ձեռնադրվելու մասին գրելիս՝ հրաշակերտ եկեղեցի (էջ 90)։ Ասողիկը այն կոչում է հրաշապայծառ եկեղեցի (էջ 89). Մեծաշեն եկեղեցի (էջ 282), Վարդան պատմիչը՝ ս. Գրիգորի տաճար (էջ 67), Մովսես Կաղանկատվացին՝ եկեղեցի (ի նորաշեն յարկս եկեղեցւոյ, էջ 157) և բանավոր հոտի բազմապայծառ փառաց, Կիրակոս Գանձակեցին՝ պարզապես ս. տեհար։

Այս բոլորից երևում է, որ Լևոնյանի ենթադրությունը հիմնված չի հին մատենագրության տվյալների վրա և առաջ է եկել միայն Զվարթնոցի կենտրոնում մեծ մկրտարանի գոյության պատճառով։

Եկեղեցու կենտրոնում փոսի մեջ կառուցած մկրտարանն իրոք որ արտակարգ է հայոց եկեղեցիների համար, և մեզ ծանոթ բոլոր հայկական տաճարների մեջ միայն Զվարթնոցն ունի։ Նա ծառայել է մեծահասակների մկրտության, իսկ երեխաներին մկրտել են տաճարի հարավարևելյան մույթի հետևում դրված խաչաձև փորվածքով տուֆյա ավազանում, որ մի խորանարդ մետրից ավելի մեծ զանգված ունի։

Բացի կենտրոնի ավազանից, որ փակված է եղել փայտյա կափարիչով և միայն մկրտության ժամանակ է բացվել, Զվարթնոցն ավագ սեղանի վրա ունի նաև արտաքո կարգի մի կառուցվածք՝ տուֆ քարից կերտած, որ ծառայել է դավանաբանական և քրիստոնեական քարոյականության քարոզիչներին և իբրև կարդացողներին իբրև ամբիոն։ Դժբախտաբար Զվարթնոցի այս առանձնահատկության վրա Գ. Լևոնյանն ուշադրություն չի դարձրել, որովհետև հենց միայն այդ ամբիոնի գոյությունը ցույց է տալիս, որ Զվարթնոցը լոկ մկրտարան չի եղել, այլ կատարել է եկեղեցու բոլոր ֆունկցիաները։

---

[1] „Всеобщая история архитектуры", т. I, էջ 428։

[2] Զվարթնոցն իրականում բոլորաձև չի, այլ՝ 32 նիստ ունեցող բազմանկյունի։

[3] Գ. Լևոնյան, Նոր կարծիքներ Զվարթնոցի մասին, էջ 197։

Մովսես Կաղանկատվացին գրում է, որ Ներսես կաթողիկոսը Բյուզանդիայի կայսր Կոստանդին հայրապետին էր և նրա գանձատան փողով շինեց Զվարթնոցը (բանավոր հոտի բազմապայծառ փարախը)[1]։

Գ. Լեոնյանն այդ վկայությունը օգտագործել է՝ ցույց տալու համար, որ Զվարթնոցը «սար էր հայերին և օտարի փողով էլ շինված»։

Սակայն, Լեոնյանն անուշադրության է մատնել այդ վկայությունից հետո Կաղանկատվացու ասածը այն մասին, որ Բյուզանդիայի Կոստանդին կայսրը հավերժ հիացած Զվարթնոցով, հրամայում է իր հետ Բյուզանդիա տանել կառուցող վարպետներին, որպեսզի նույնաձև մի եկեղեցի շինեն նրա պալատում, բայց ճանապարհին մեռնում է և նրա այդ մտադրությունը մնում է անկատար։

Եթե Կաղանկատվացու այդ տեղեկությունը ստույգ համարենք, որ չի հաստատվում VII դարի մատենագիր Սեբեոսի վկայությամբ, պարզվում է, որ Զվարթնոցի տաճարի ճարտարապետությունը ծանոթ չի եղել Բյուզանդիային և կայսրը հայ վարպետների միջոցով է ուզեցել ընդօրինակել այն և ոչ թե հակառակը, ինչպես ենթադրել է Լեոնյանը։

Սակայն Կաղանկատվացու այն տեղեկությունը, թե որի Զվարթնոցը կառուցվել է բյուզանդական գանձատան դրամական միջոցներով, կարծում ենք, ժողովրդական ավանդություն է, որ հորինվել է ամենաշուտը X դարի ընթացքում, որովհետև հին մատենագիրները չգիտեն այդ մասին։

Եթե իրոք բյուզանդական գանձատան հաշվին կառուցված լիներ Զվարթնոցը, այդ դեպքում Ներսեսի հակառակորդ Սեբեոսն իր մեկնողական կետերից մեկն էլ այդ կդարձներ, բայց ինչպես նա, այնպես էլ ավելի ուշ ժամանակների մատենագիրները ոչինչ չեն գրում այդ մասին։

Մեզ թվում է, որ ժողովուրդը Զվարթնոցի արտասովոր մեծության և հրաշակերտ բանդակների ազդեցության տակ ենթադրել է, թե այդպիսի շենք կարելի էր կառուցել միայն մեծ պետության գանձատան հաշվին, ուստի և հորինել է այդ պատմությունը։ Նշանակում է, այդ ավանդությամբ ժողովուրդն ուզեցել է շեշտել Զվարթնոցի մեծությունն ու նրա արքայական ծագումը և ոչ թե նրա օտար լինելու հանգամանքը։

Թե ինչ չափով սիրելի է եղել հետո Զվարթնոցի ճարտարապետությունը, այդ երևում է նրանից, որ տաճարի կործանումից հետո, X դարի վերջին, Բագրատունյաց Գագիկ Ա թագավորը հրամայում է ժամանակի մեծագույն ճարտարապետ Տրդատին Զվարթնոցի չափով և նրա ձևերով մի եկեղեցի կառուցել Անի քաղաքում[2]։

Դ. Զվարթնոցի կործանման պատճառները և ժամանակը

Գիտության մեջ այն տեսակետն է ընդունված եղել, որ իբր թե Զվարթնոցի տաճարը կործանվել է երկրաշարժից։

Այդ կարծիքը հայտնողները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ Զվարթնոցի երկրորդ հարկարաժնի հսկայածավալ բոլորակ պատը նստած է եղել հատակաձևում կորություն ունեցող «թ» կամարների վրա, որոնք հանգստացել են մույթերի հետևին գտնվող արծվենդակ սյուների ու տաճարի կենտրոնական մասում կիսաբոլոր կպմող սյունաշարերի միջին երկու սյուների վրա։ Երկրորդ հարկարաժնի պատի ամբողջ ծանրությունն իրենց վրա կրող այս սյուներն են, որ Զվարթնոցի կառուցվածքի մեջ համարվել են թույլ և տաճարի կործանման պատճառ։ Եվ իրոք, այդ իսկ պատճառով Անիի Գագկաշեն տաճարի համապատասխան տեղերում, սյուների կողքերին լրացուցիչ հենապատեր են կառուցվել, բայց Զվարթնոցում այդպիսի լրացուցիչ կառուցվածքներ չկան և նրա թույլ համարվող հենակետերն ամրացնելու կարիք չեն ունեցել։ Նրանք դիմացել են այնպիսի աշխարհավեր երկրաշարժի, ինչպիսին էր 893 թվականին։ Երբ շրջապատում մեծ թվով հուշարձաններ կործանվեցին։

Հիմնահատակ փլվեց Դվինի կաթողիկե եկեղեցին և այլևս չվերականգնվեց, հիմնովին ավերվեց հաստ պատեր ունեցող Դվինի միանավ բազիլիկ տաճարը[3]։ Զվարթնոցի եկեղեցին այդ ժամանակ չեն էր, նա երկրաշարժից չէր վնասվել և հայոց Գեորգ կաթողիկոսը Դվինում

[1] «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Ազուանից աշխարհի», ի լույս ընծայեաց Մկրտիչ Էմին», Մոսկվա, 1860, էջ 255։

[2] Ասողիկ, էջ 282։

[3] Դրասխանակերտցի, էջ 162—166։

անօթևան մնալու պատճառով տեղափոխվեց Զվարթնոց ու այնտեղ հաստատեց իր բնակությունը։

Զվարթնոցը կործանված չի եղել նաև Ա դարի առաջին երեք տասնամյակներում։ Այդ գիտենք նախ Դրասխանակերտցուց, որ իր պատմությունը հասցրել է մինչև 924 թվականը (մեռել է 929 թվականին Աղթամարում) և ապա Թովմա Արծրունուց, որ նկարագրել է մինչև 930 թվականի դեպքերը։ Այդ երկու պատմագիրների գործերից երևում է, որ Զվարթնոցը մինչև վերջ կանգուն էր։

Զվարթնոցի կանգուն լինելու մասին վերջին տեղեկություն տվողը, որ հայտնի է մեզ, արաբ մատենագիր Ալ. Մուկադասին է։ Սա իր գիրքը գրել է 985 թվականին և իրեն զարմանալի երևույթ հիշատակել է Զվարթնոցի ավագ խորանի վրայի տիրամոր պատկերի մասին։ Այդ նկարը, ինչպես պարզվեց պեղումներից, մեծադիր խճանկար էր, մասամբ բնական և մեծ մասամբ էլ արհեստական ապակենման քարերից շինված, որի մնացորդները մինչև օրս պահպանվում են Զվարթնոցի թանգարանում։ Այդ նկարի մասին Ալ. Մուկադասին գրել է՝

«Դարիլից (Դվինից) երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակավուն տաշած քարերից շինած ութ սյուների վրա (նստած) գմբեթաձև գլխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը... Որ դռնից էլ որ մտնես, դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[2]։

Զվարթնոցի քարերը սպիտակ չեն, այլ կարմրավուն և մոխրագույն, խառը շարած, որ նրա արտաքին տեսքին առանձին շուք են տալիս։ Արաբ մատենագիրն այստեղ ճիշտ չի հիշում, կամ ըստ երևույթին ինքը չի տեսել Զվարթնոցը և ուրիշների պատմածով է գրել՝ սխալ տպավորության ներքո։ Սակայն հիշատակությունը տաճարի գմբեթաձևության մասին, և նրա նմանեցնելը արաբական գլխարկի՝ (գլխի փաթաթանի), տակը լայն և վերին մասը նեղ, ցույց են տալիս, որ անկասկած խոսքը Զվարթնոցին է վերաբերում, մանավանդ որ մատենագիրը նշում է նաև նրա երեք փարսախ հեռու գտնվելը Դվինից։

Եթե ընդունենք, որ Ալ-Մուկադասին իր գիրքը գրել է Հայաստանում լինելուց թեկուզ մի տասնամյակ հետո, այնուամենայնիվ կարող ենք վստահորեն պնդել, որ Զվարթնոցը կանգուն է եղել մինչև X դարի ութսունական թվականները, բայց ոչ ավելի, որովհետև Ասողիկի պատմության մեջ 1000 թվականին («ամն Ռ մարմնանալոյ տեառն մերոյ») Զվարթնոցը հիշատակված է իբրև կործանված եկեղեցի («որ էր փլեալ և կործանեալ»)։

Նշանակում է, Զվարթնոցը կանգուն է եղել մոտ 330 տարի, եթե կառուցումը համարենք ավարտված 652 թվականին և կործանումը՝ X դարի ութսունական թվականներին։ Այս պարագային, խոսք չի կարող լինել Երկրորդ հարկաբաժնի հսկայական զանգվածն իրենց վրա պահող պատասխանատու կետերի թույլ լինելու մասին, որոնք մինչև վերջ լիովին կատարել են իրենց դերը։

Այս բոլորն առիթ են տալիս մեզ ենթադրելու, որ Զվարթնոցի Երկրորդ հարկաբաժինը պահող կոր կամարներն ու նրանց տակի սյուները չեն, որ պատճառ են եղել տաճարի կործանման, կարծում ենք, որ Զվարթնոցը երկրաշարժից չի կործանվել, որի մասին չկա նաև հնից ավանդած որևէ հիշատակություն։

Ուսումնասիրողներից մի բանիսն այն կարծիքն են հայտնել, որ Զվարթնոցը լինելով էջմիածնի նկատմամբ գրեթե մի հսկայական տաճար, սիրելի չի եղել հայ ժողովրդին և այդ պատճառով ամայացել է ու հետզհետե բայքայվելով կործանվել։

Արիստակես եպիսկոպոս Սեգրակյանը Զվարթնոցի կործանման մասին գրել է.

«Ամենից հավանականը պետք է համարել այն, որ հետագաներն ըմբռնելով այդ եկեղեցու շինության նպատակը (հունադավանություն տարածելը—Կ. Ղ.)՝ լրել թողել են ուշադրությունից և ինքն իրան ամայության և հնության չնորհիվ բայքայվել, կործանվել է»[3]։

---

[1] Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց. ի լոյս էած Ա. Պ. ի ՍՊր, 1887, էջ 231։

[2] „Сборник материалов по описанию местностей и племен Кавказа", выпуск XXXVIII, Тифлис, 1908, էջ 16։

[3] Արիստակես եպիսկոպոս (Սեգրակյան), Հայաստանյաց եկեղեցու պատկերազարդությունը, մասն Ա, ՍՊր, 1904, էջ 183—184։ Այդ նույն կարծիքն է հայտնել նաև Հուսիկ եպիսկոպոսն իր մի հոդվածում «Վաղարշապատի առաջարը կամ Զվարթնոց եկեղեցին», «Արարատ», 1905, էջ 874։ Նա գրում է, որ վերջին դարերում ժողովուրդը Զվարթնոցի ավերակների նկատմամբ բարեպաշտական ձգտում չի ունեցել, մոմ ու ճրագ չի վառել։

Ինչպես վերևում տեսանք, Զվարթնոցը երբեք էլ խորթ չէր ֆեոդալական Հայաստանի կրոնական-դավանաբանական դաշտափարախոսությանը և հունադավանություն տարածելու նպատակով չէր շինված։ Բազմաթիվ փաստերով ցույց տվինք, որ Զվարթնոցը համարվել է սիեզերաձոյակ մի եկեղեցի և հայոց բոլոր կրոնական շինությունների մեջ ամենից գեղեցիկը. Սակայն, չնայած այդ բոլորին, արվեստագետ Գարեգին Լևոնյանը հիմնվելով Արիստակես եպ. Սեդրակյանի կարծիքի վրա, աշխատել է հիմնավորել նրա սխալ տեսակետը և իր կողմից էլ ավելացրել, որ՝

«Նորձանվելուց հետո Զվարթնոցի ավերակները անշուշտ որոշ պատճառներով ժողովրդի կողմից չեն վայելել այն հարգանքը, ինչ որ ուրիշ ավերակներ»[1]։

Այդ անտարբերությունը, կարծում ենք, բոլորովին կապ չունի Զվարթնոցի ճարտարապետական ոճի «խորթ» կամ «հարազատ» լինելու հանգամանքի հետ, որովհետև XX դարում Վաղարշապատի և նրա շրջակայքի բնակիչները Զվարթնոցի ճարտարապետական ոճի մասին ոչինչ չգիտեին։

Վերջին դարերում Զվարթնոցի ավերակների նկատմամբ ժողովրդի անտարբեր վերաբերմունքը պետք է բացատրել նրանով, որ ժողովուրդն այլևս չգիտեր ավերակների ինչ լինելը և այդ պատճառով էլ անխնա կերպով օգտագործում էր այդ հուշարձանի քարերը տուն ու գոմ կառուցելու համար։ Նույնիսկ Էջմիածնի վանքը տարված չորս խոյակների որտեղից բերված լինելը հայտնի չի եղել և միայն նրանց վրայի փակագիր հունարեն գրությունները, որտեղ կարդացվում են Ներսես և կաթողիկոս բառերը, 1890 թվականին Էջմիածին եկած Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Հովսեփ Ստրշիգովսկուն այն եզրակացության հանգեցրին, որ գրանք պատկանում են Զվարթնոցի եկեղեցուն[2]։

Զվարթնոցի ավերակների քարերը շինարարության մեջ օգտագործել են նաև Մովսես վարդապետի նախաձեռնությամբ, Էջմիածնի շրջապարիսպը շինելու ժամանակ XVII դարում[3], Եվ երբ, 1893 թվականին, Էջմիածնի միաբանության նոր բնակարանների շինության պատճառով բանդեցին վանքի հին պարիսպը, այնտեղ գտնվեցին Զվարթնոցի տաճարի բանգակազարդ բեկորներ[4]։ Հավանաբար XVIII դարում պարսի շինության ժամանակ են Էջմիածին տարվել Զվարթնոցի այն 4 խոյակները, որ 1943 կամ 1944 թվականին պետական կարգադրությամբ ճարտ. Լիպարիտ Ազոյանի ձեռքով փոխադրվեցին Զվարթնոց՝ հուշարձանի ավերակները կարգավորելու և բեկորներն այնտեղ կենտրոնացնելու նկատառումով։

Հին մատենագիրներից միայն երեքն են գրել Զվարթնոցի տաճարը բանդվելու մասին։ Դրանցից մեկն Ասողիկն է, որ ոչինչ չի ասում բանդման պատճառների մասին։ Նա իր պատմության 41-րդ գլխում, որ նվիրված է Անիի Գագկաշեն տաճարի կառուցմանը, նշում է, որ 1000 թվականին Զվարթնոցը «էր փլեալ և կործանեալ»[5]։ Մյուսը Կիրակոս Գանձակեցին է, որ գրել է, թե Զվարթնոցը բանդել են արաբները—«աւերեցաւ ի տաճկաց»[6] և Երրորդը՝ Մխիթար Այրիվանեցին է, որ Զվարթնոցի ավերման պատճառը համարում է դարձյալ արաբներին՝ «քակեցաւ ի տաճկաց»[7]։

Արաբական զորամասերը Զվարթնոցի տաճարը կարող էին բանդել ու ավերել ոչ միայն թշնամության և կրոնական ատելության պատճառով, այլև իրենց իշխանության սահմաններում գործող պետական օրենքներից բխող նկատառումներով։

Բաղդադի գադի Աբու Յուսուֆ Յակուբն իր «Քիթաբ էլ խարաջ» գրքի մեջ, որ գրել է Հարուն խալիֆի հանձնարարությամբ, ասում է.

«Զիմիներին (արաբական խալիֆայության հպատակ ոչ մուսուլման ժողովուրդները) չի թույլատրվում մուսուլմանների տիրակալության մեջ կառուցել ոչ նոր տաճար, ոչ նոր եկեղեցի.

---

[1] Գ. Լևոնյան, Վերոհիշյալ հոդվածը, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», № 1, էջ 205։

[2] Josef Strzigowski, Das Etschmiadziner Evangeliar, Wien, 1891.

[3] Էջմիածնի շրջապարիսպի շինությունն սկսվել է 1627 թվականին։ Տե՛ս «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու. եպս. Շահխաթունեանց», հատոր Ա, Էջմիածին, 1842, էջ 86։

[4] Մեսրոպ վարդ., Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ։ գրակ Ա, «Ազգագրական հանդես», գիրք, XV. Թիֆլիս, 1907, էջ 95։

[5] Ասողիկ, էջ 282։

[6] Կիրակոս Գանձակեցի, էջ 88։

[7] Մխիթար Այրիվանեցի, էջ 50։

ԵՔԼ նրանք կառուցեն այդպիսիները, ապա ենթակա են քանդման։ Բայց, թույլատրվում է վերականգնել նրանց հին տաճարների և եկեղեցիների բանդված մասերը։

Երկրորդ՝ նրանց (ոչ մուսուլմանների) շենքերը մուսուլմանների շենքերից բարձր չպետք է լինեն, իսկ եթե վերջինները ցածր են, ապա նրանք պետք է հավասար բարձրության լինեն»[1]։

Այս օրենքի գոյության պայմաններում արաբները չէին կարող հանդուրժել Զվարթնոցի պես հսկայական բարձրություն ունեցող շենքի գոյությունը։

Մեզ թվում է, որ Հայաստանի բազմաթիվ տաճարների գմբեթների կործանումը VIII—X դարերում պետք է վերագրել ոչ միայն երկրաշարժներին, այլ մասամբ նաև այս օրենքի հիման վրա կատարած ավերածություններին։

Մենք այն համոզմանն ենք, որ Դանձակեցին և Այրիվանեցին ճիշտ են և Զվարթնոցի տաճարը քանդել են արաբները, ինչպես վերևում նշեցինք, X դարի 80-ական թվականներին։

Գ. Զվարթնոցը ամայի վայրում է կառուցվել, թե՞ այնտեղ հին շենքեր եղել են

Ուսումնասիրողներին տարբերակ է թվացել, թե ինչո՞ւ Ներսես Տայեցին VII դարի կեսերին հեռացավ Դվինից և իր տաճարն ու բնակության շենքերը կառուցեց մի ամայի վայրում, որ ընդամենը 3 կիլոմետր հեռու էր բրիստոնեության առաջին կենտրոնը հանդիսացող էջմիածնի տաճարից։ Ինչո՞ւ նա իր աթոռանիստը չդարձրեց էջմիածինը, որ արդեն սրբագործված էր Գրիգոր Լուսավորչի շուրջը հյուսված բազմաթիվ ավանդություններով և այդ միջոցին գտնվում էր գրեթե լրված վիճակում։ Մի՞թե հնարավոր բան էր, որ կաթողիկոսը հեռանար երկրի կենտրոնից մի անապատ տեղ, այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ մայրաքաղաքն արաբների տնավոր կուսակրածից և գերեվարությունից հետո, քաղաքական բարդ իրադրությունների պայմաններում դարձյալ բռնել էր վերելքի ճանապարհը։

Այս հարցերին ուսումնասիրողները ավել են տարբեր բացատրություններ։

Ճարտարապետ Թորոս Թորամանյանն սկզբում այն կարծիքն է հայտնել, որ Ներսեսն իր շինարարական մեծ ծրագիրը չէր կարող իրագործել ոչ Դվինում և ոչ էլ էջմիածնում, որովհետև այդ երկու վայրերն էլ բարուրանգ ու թշվառ վիճակի մեջ էին՝ մեկը արաբների արշավանքի ժամանակ էր ամայացել, իսկ մյուսը գրեթե լրված մնալուց։ Այդ պատճառով նա ընտրեց Վաղարշապատի մոտ մի անջուր և անապատ տեղ։

Թորամանյանի կարծիքով Ներսեսի շինարարության առաջ մղիչ ուժը կամ հիմնական դրդապատճառը նրա անհագ փառասիրությունն էր։ Սակայն փառասիրությունն իր դատապարտելի կողմերն ունենալով հանդերձ, Թորամանյանի ասելով «եղել է նաև մի զորավոր մղիչ ուժ՝ արվեստի և գիտության անդադար առաջադիմության և զարգացման համար»[3]։

Հետագայում, երբ Թորամանյանն ուսումնասիրեց նաև Զվարթնոցի շրջապատը, գլխավորապես Հռիփսիմեի տաճարի և Զվարթնոցի միջև ընկած տարածությունը, նա իր վերոհիշյալ տեսակետից հրաժարվեց և հանգեց այն եզրակացության, որ Զվարթնոցը կառուցված է եղել ոչ թե անապատ ու անջուր մի վայրում, այլ Վաղարշապատ բաղաքի մեջ։ Ուրիշ խոսքով, Թորամանյանի կարծիքով, հնում Վաղարշապատ բաղաքը տեղավորված է եղել այժմյան քաղաքից դեպի արևելք՝ Հռիփսիմեի և Զվարթնոցի միջև։ Հետագայում քաղաքի այդ թաղամասն ամայացել է, վերածվել անջրդի ու անապատ տարածության և քաղաքը սկսել է տարածվել դեպի արևմուտք, այսինքն՝ արդի բաղաքի տեղը։

Այդ եզրակացությանն հանգելու համար Թորամանյանին հիմք են ծառայել մի քանի հնագիտական հայտնագործումները, որոնք պատահաբար բացվել են Զվարթնոցի և Հռիփսիմեի միջև ընկած ամայի տարածության մեջ։ Այնտեղ գտնվել են.

ա. Մի հունարեն արձանագրություն, որ հայտնաբերվել է առու փորելու ժամանակ։

---

[1] „Православный палестинский сборник", том XVII, выпуск 50, էջ 1340։

[2] Զվարթնոցի՝ արաբ հրոսակախմբերի ձեռքով քանդված լինելու տեսակետին է նաև Շահխաթունյանցը։ Նա իր գրքի 290 էջում գրում է՝

«Արդարև տապալումն եկեղեցւոյս հանդերձ այլովք շինուածովքն երևի լինել յօտարազգի թշնամեաց...»։ Ալիշանն էլ նույնպիսի կարծիք է հայտնել. «Զեռին թշնամւոյ յօշ յօշ պատառեալ է զկենդանատիպ քարինսն»։ Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, տեղեգրեաց հ. Ղ. վ. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 246։

[3] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության։ Երևան, 1942, էջ 262։

բ. Մի քանի բլուրների վրա Լայայանի և Խաչիկ վարդապետի կատարած փորձնական պեղումների միջոցին դուրս են եկել հնագույն շրջանի առարկաներ։

գ. 1904 թվականին, Հռիփսիմեի տաճարից քիչ հարավ-արևելք գտնվող Անասնաթաղ բլուրի վրա բացվել է մի պարսպամաս, որի արտաքին բուրգը ներկա էջմիածին քաղաքի կողմում է եղել։ Նշանակում է, քաղաքն ընկած է եղել այժմյան Հռիփսիմեի և Զվարթնոցի միջև։

դ. Նույն բլուրի վրա նորից պեղումներ են կատարվել պարիսպը բաց անելու համար, բայց պարսպի փոխարեն բացվել է հնագույն ժամանակի դամբարան, որ ծածկել են հողով՝ առանց գերեզմանը բաց անելու։

Թորամանյանը եզրակացնում է՝

«Այս բոլոր պատահական դյուտերը միացած Զվարթնոցի և պատմագրական վկայությունների հետ, կարծեմ, բավական են հաստատելու, որ հին Վաղարշապատ կամ Նոր քաղաքը (Կայենուպոլիս) ծածկված է Զվարթնոցը շրջապատող մեծ ու փոքր բլուրներու ներքև և փորձնական պեղումներն անհետաձգելի պետք է լինին հայկական Պոմպեի մը հայտնագործելու համար»։

Զվարթնոցի կառուցման ժամանակ հին Վաղարշապատ քաղաքը Թորամանյանի կարծիքով «անշքացել էր և համարյա հավասարվել էր մի գյուղի» և Ներսես անմահանալու նկատառումով ուզեց «վերականգնել երկու հարյուր տարի ի վեր ավերված Վաղարշապատը և կամ Նոր քաղաքը»[1]։

«Հայկական Պոմպեն» հայտնագործելու նպատակով 1931 թվականին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն ձեռնարկեց Հին Վաղարշապատի պեղումները։ Արշավախումբը բացի Զվարթնոցի հարավային կողմում կատարվող փորձածավալ աշխատանքներից, զբաղվեց նաև Զվարթնոցի և Հռիփսիմեի միջև ընկած տարածության մանրամասն հնագիտական հետախուզությամբ։

Այդ պեղումների գիտական ղեկավարն անվանականորեն ակադեմիկոս Ն. Մառն էր, որ բոլորովին չկարողացավ մասնակցել աշխատանքներին, իսկ ընդհանուր ղեկավարը Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահ ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանն էր, բայց պեղումները Մառի և Թամանյանի անունից անմիջականորեն ղեկավարում էր պրոֆ. Աշխարհբեգ Քալանթարը։

Արշավախմբին մասնակցեցին ճարտ. Թորոս Թորամանյանը, պրոֆ. Ամրատ Տեր-Ավետիսյանը, Մատենադարանի դիրեկտոր Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, երիտասարդ գիտական աշխատողներ՝ Եվգենի Բայբուրդյանը, Սուրեն Երեմյանը, ճարտ. Հովհաննես Ղալփախչյանը, երկրաչափ Գրիգոր Գրիգորյանը, տողերիս գրողը, մեկ երկու օրով նաև ուրիշները[2]։

Կազմվեցին չորս առանձին խմբեր, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն ծրագիրն ուներ։

Առաջին խումբը Թորամանյանի գլխավորությամբ պեղումներ ձեռնարկեց Զվարթնոցի հարակից շենքերի հարավային կողմում՝ միանավ բազիլիկ շենքի մոտերքին, որտեղ մոխրաշերտի մեջ թաղված տուֆակերտ պատերի մնացորդներ բացվեցին։ Թորամանյանի հիվանդության պատճառով շուտով պեղումներն ընդհատվեցին, բայց նա եկավ այն եզրակացության, որ այդտեղ մեծ հրդեհ է պատահել Ներսեսի շինարարությունից առաջ, V—VI դարերում[3]։

Երկրորդ խումբը Տեր-Հակոբյանի ղեկավարությամբ հետախուզեց Անասնաթաղ բլուրը, այնտեղ հին Վաղարշապատ քաղաքի արևմտյան պարսպի մնացորդները գտնելու համար, որոնք ժամանակին տեսել էին Թորամանյանը և Մեսրոպ Մագիստրոսը[4]։ Զանազան ուղղությամբ կատարված փորումների միջոցին բացվեցին անտիկ շրջանին պատկանող դամբարաններ, իսկ պարսպի հետքեր չգտնվեցին ի սրմանս Թորամանյանի, որ պնդում էր, թե իր աչքերով է տեսել կիսաբոլոր աշտարակներից մեկը։

Հետագայում պարզվեց, որ Թորամանյանի տեսածը ոչ թե պարսպի մաս կազմող աշտարակ է եղել, այլ մի մեծ դամբարանի բոլորաձև շարվածք և կապ չունի Վաղարշապատ քաղաքի հետ[5]։

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ի ժողովածու, Երևան, 1948, էջ 85։

[2] Պեղումների գիտական հաշվետվությունը տե՛ս պրոֆ. Աշխարհբեգ Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։

[3] Անդ, էջ 13։

[4] Մեսրոպ վարդ., Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, պրակ Ա, էջ 98։

[5] 1936 թվականին, երբ Թորամանյանն արդեն վախճանված էր, Անասնաթաղ բլրի վրա պատահարար բացվեց հիմնական դամբարանը, որ կազմված էր հսկայական քարարկղից, մոտ 2,5. 4 մետր մակերեսով։

Երրորդ խումբը, սկզբում Տեր-Ավետիսյանի և հետո Աշխ. Քալանթարի ղեկավարությամբ, պեղեց Զվարթնոցից դեպի հարավ բնկած բլրաձև մեծ դամբարաններից մեկը, որի միջից գրեթե ոչինչ չգտնվեց, բացի դամբանափոսից։

Չորրորդ խումբը Աշխ. Քալանթարի գլխավորությամբ հետախուզեց Զվարթնոցի և Հռիփսիմեի միջև բնկած տարածությունը և Զվարթնոցի շրջապատում ուսումնասիրեց Զվարթնոցի ներսիստշեն բաղաբատիպ ավանը շրջափակող բոլորաձև պարիսպն ու նրա ներսում գտնվող բնակելի շենքերի մի քանի մնացորդներ։

Պարզվեց, որ Զվարթնոցի շրջապատում, մոտ մեկ կիլոմետր տրամագծով գոյություն է ունեցել 1,8 մետր լայնք ունեցող հաստահեղույս մի պարիսպ, որից պահպանվել է միայն հիմնապատերի մի շարքը, այն էլ տեղ-տեղ, մեծ մասամբ Զվարթնոցից դեպի հարավ-արևելք բնկնող տարածության վրա, որտեղ անցյալում հողային աշխատանք չի կատարվել։ Պարսպի հիմնապատերի երկու երեսը շարված է եղել տուֆ քարով, իսկ միջուկը՝ լցված մանր տաշվածքի բեկորներով։ Կրաշաղախի հետք չգտնվեց և ոչ մի տեղում։ Թեև այժմ դժվար է որոշել, թե պարիսպն ընդհանրապես ինչից է եղել շինված՝ քարից թե՞ հում աղյուսից, բայց նկատի ունենալով կրաշաղախի բացակայությունը, ինչպես նաև հաշվի առնելով տեղական սովորությունները, կարող ենք պնդել, որ քարաշերտի մի շարքի վրա դրված է եղել կավակերտ պատը՝ հավանաբար քարաշար գոտիով, և պատի վերևում էլ եղել են մարտկոցներ (հրանատներ), ինչպես այդ տեսնում ենք Էջմիածնի վանքի և Հռիփսիմեի տաճարի հին պարիսպների վրա, որոնք թեև ուշ դարերի են, 1441-ից հետո շինված, բայց երկուսի հիմքերն էլ դրված են հին մնացորդների վրա։

Զվարթնոցի պարիսպն աշտարակներ չի ունեցել, հիմնապատերի մեջ նրանց հետքերը չկան։ Տաճարի հարավ-արևելյան կողմում, մոտ կես կիլոմետր հեռավորության վրա, պարիսպն ունեցել է 4 մետր բացվածքով մի մուտք՝ դեպի եկեղեցին տանող ճանապարհով։ Այդ ճանապարհի կողքերին ի հայտ եկան ավելի նեղ կավակերտ պարիսպներ, որոնք ընդհանուր պարսպի ներսում գտնվող շենքերը բաժանել են թաղերի և վանքը տանող ճանապարհն անջատել են բնակելի տներից։

Պարսպի պարփակած տարածությունը, ինչպես պարզվեց հետախուզական պեղումներից, ծածկված է եղել բնակելի տների թաղամասերով։ Այնպես որ, միանգամայն հաստատվում են Դրասխանակերտցու տեղեկությունները Զվարթնոցի շրջապատում բաղաբատիպ բնակավայր հաստատելու, պարսպով շրջափակելու, ինչպես նաև Քասաղ գետից ջրանցք բերելու և խաղողի այգիներ տնկելու մասին։

«Բայց Հայրապետն Ներսէս պարսպ տնձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն, ըստ իւր իսկ էր շինեալ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք։ Այլ և կարդեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի բաղաքականաց. և ածեալ ջուր ի Քասաղ գետոյ զամենայն ուսգախիր առատպար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստան ծաղկոցացն»[1]։

Դրասխանակերտցու այս վկայությունը գրեթե բառացիորեն կրկնել է Վարդան պատմիչն իր պատմության մեջ[2]։

Այս տեղեկության մեջ ուշագրավն այն է, որ Ներսես Շինողը Զվարթնոցի շրջապատում բաղաքային բնակչություն հավաքելով, նրանց որոշ ազատություն կամ արտոնություն է տվել ըստ պայմանի մաղամախանաց։ Ակադ. Հ. Մանանդյանը նկատի առնելով Դրասխանակերտցու այս վկայությունը, ասում է, որ պատմագիրն այստեղ մասնանշել է տեղում Հայաստանի բաղաքային բնակչության ունեցած արտոնությունները, որոնց ինչ լինելը դժվար է պարզել տվյալների պակասի պատճառով[3]։

1939 թվականին շինարարական աշխատանքների ընթացքում Էջմիածնի վանքի տպարանի մուտքի առաջ, պարսպի կողմում, մոտ 2 մետր խորությամբ ի հայտ եկան անտիկ ժամանակա-

---

[1] Դրասխանակերտցի, էջ 88։

[2] «և զկնի վեց ամի դարձաւ (Հայրապետն Ներսէս) լուսաւորչական զմահն Թէոդորոսի. և շինէ իւր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն. և կացուցանէ ամբոխութիւնս երդումարդոց, ըստ օրինի բաղաքականութեան և ածէ ջուր. ի Քասախ գետոյ, և տնկէ անտառս և այգիս։ (Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862, էջ 69)։

[3] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, изд. 2, Ереван, 1954, էջ 230—231։

շրջանին պատկանող բաղանիքի ընդհատակյա շարվածքներ, որ ցույց է տալիս քաղաքի՝ այն տեղում լինելը։

Այս բոլորից եզրակացնում ենք, որ հին Վաղարշապատ Զվարթնոցի և Հռիփսիմեի միջև չի եղել, այլ քաղաքը միշտ էլ գտնվել է իր այժմյան տեղում, որովհետև էջմիածնի տաճարը, բուն ավանդության և պատմաբանների միաբերան վկայության, գտնվել է քաղաքի մեջ։

Հռիփսիմեից դեպի Զվարթնոց ընկած տարածությունը, ինչպես շատ հնում, նույնպես և հետագայում եղել է գերեզմանոց[1]։

Բնակավայրի հետքեր կան միայն Զվարթնոցի տաճարի շրջապատում, բայց դրանք էլ ոչ մի կապ չունեն հին Վաղարշապատի հետ և պատկանում են Ներսես Շինողի հիմնադրած բաղարատիպ բնակավայրին, որ, ինչպես տեսանք, պարփակված էր Զվարթնոցի շուրջը եղող բոլորակ պարսպով։

Նշանակում է, Ներսես Շինողն իր եկեղեցին և բնակության շենքերը կառուցել է ոչ թե Վաղարշապատի մեջ, ինչպես ենթադրում էր Թորամանյանը, այլ նրանից մոտ 3 կիլոմետր հեռու, ավազոտ անապատում, որտեղ, ինչպես հայտնի է խաչիկ վարդապետի պեղումներից, գոյություն են ունեցել հնագույն ժամանակներին պատկանող շենքեր։

Պեղումների ժամանակ Զվարթնոցի ավերակների հարավային կողմում հայտնագործվեց IV—V դարերում կառուցված մի միանավ տաճար, որի միայն արևելյան մասն է պահպանվել իր խորանով և վեմ քարով հանդերձ, իսկ արևմտյան մասը, տաճարի կեսից ավելին, քանդվել է Ներսեսի շինարարական աշխատանքների ժամանակ և այնտեղ կառուցվել են միաբանների բնակարանները (նկ. 1)[2]։

Դեռ ավելին։

Զվարթնոցի պեղումների ժամանակ գտնվել են IV, V դարերին պատկանող երկու բարձրաքանդակ՝ աշխարհիկ կյանքի տեսարանով։ Մեկի վրա պատկերված է մարդու և առյուծի մենամարտ (նկ. 2), որ բնորոշ է սասանյան տիրապետության ժամանակաշրջանի համար. մյուսը ևս նույն ժամանակին պատկանող մի բեկոր է, որը հավանաբար դարձյալ մենամարտի տեսարան է ներկայացրել, քանի որ նրա վրա երևում են մարդու ոտքեր՝ զրված իրարից բավական հեռու։ Այդ երկու քարերն էլ քառանկյունի հարթ մակերես ունեն, շրջանակավորված են և որոշակիորեն տարբերվում են ներսիսաշեն կառուցվածքներից (նկ. 3)։ Գտնված են շրջանակավորված մի քանի այլ քարեր ևս, որոնցից մեկի վրա վարդյակներ են քանդակված (նկ. 4), իսկ մյուսների մակերեսը սրբատաշ է, առանց քանդակների։ Թե ինչի են ծառայել բարձրաքանդակ չունեցողները, հայտնի չէ, բայց պարզ է, որ դրանք ևս պատկանել են IV—V դարերին։

Զվարթնոցի հնագույն բազիլիկ եկեղեցու ավերակների մեջ գտնվել են այսպես երեք մեծ խարիսխներ՝ հրդեհված մակերեսով, որոնք ոչ մի նմանություն չունեն Ներսեսի կառուցած

---

[1] Երկրորդ հազարամյակի վերջից մ. թ. ա. այնտեղ պահպանվել են մի քանի մեծ հողաբլուր դամբարաններ, որ պեղմամբ ուսումնասիրել են ազգագրագետ Երվանդ Լալայանը, խաչիկ վարդապետը, մեկն էլ՝ 1931 թվականին, պրոֆ. Աշխարհբեգ Քալանթարը՝ հին Վաղարշապատի պեղումների ժամանակ։ Անտիկ շրջանի դամբարանները, որ բռնում են Հռիփսիմեի տաճարից սկսած մինչև Հրազդանից եկող առուն, և փռված են խճուղու երկու կողմերում, հաճախակի բացվել են հողային աշխատանքների ժամանակ, նախասովետական շրջանում և հետագայում։ Այդ դամբարանները մանրամասն ուսումնասիրվեցին 1931 թվականի պեղումների մասնակից Եվգենի Բայբուրդյանի կողմից։ Դրանք տարբեր ձևերի են, կան սալ քարերով պատրաստած խիստ երկարաձիգ ու նեղ քարարկղյա դամբարաններ, որ բնորոշ են վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի համար (I-ից մինչև IV դարի կեսերը)։ Կան կարասյա թաղումներ՝ հռոմեական ժամանակաշրջանի համար բնորոշ առարկաներով (դրամ, ապակե սրվակներ, մատանիներ գեմմաներով, ուլունքներ և այլն), երկու տարբեր տեսակի կավե դագաղներով թաղումներ. դագաղների մի տեսակը կոշկաձև է, իսկ մյուսը՝ նավակաձև։ Կան նաև ուղղակի հողի մեջ փորված դամբարաններ, ծածկված մի քանի շերտաքարով։ Այս դամբարանները, կարծես, ավելի ուշ ժամանակի են պատկանում։

[2] Թորամանյանն այս եկեղեցին համարում է V դարի՝ մեծ տարբերություն չդնելով IV և V դարերի տաճարական ձևերի մեջ (տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների Բ հոդվածաշ., էջ 105)։

տաճարի և մյուս շենքերի խարիսխներին. դրանք պատկանել են մի հին շինության, որն անհետացել է V դարի շինարարության ժամանակ (նկ. 5)։

Նկ. 1. IV—V դդ. միանավ բազիլիկ տաճարի մնացորդներ Զվարթնոցի հր. կողմում

Նշանակում է, Զվարթնոցում IV—V դարերում, բացի միանավ բազիլիկ տաճարից գոյություն է ունեցել մի սյունազարդ շենք ևս, աշխարհիկ բարձրաքանդակներով զարդարված, որի ինչ նպատակի ծառայած լինելը և ինչ ձևեր ունենալը մեզ անհայտ է։

Այս բոլորը մեզ բերում են այն եզրակացության, որ Ներսես Շինողն իր տաճարը կառուցել է ոչ թե ամայի տեղում, ինչպես այդ մասին գրել են Մերեռոր և ուրիշները, այլ մի վայրում, որտեղ եղել են մի միանավ բազիլիկ տաճար, մի մեծ սյունազարդ շենք և այլ շենքեր ևս, որոնց թվում, կարծում ենք, նաև ուրարտական մի տաճարի մնացորդներ։

Նկ. 2. IV—V դդ. բարձրաքանդակ մարգու և առյուծի գոտեմարտի պատկերով։ Գտնված է Զվարթնոցում

Ուրարտական տաճարի գոյությունը լոկ ենթադրություն չի։

1900 թվականի հուլիսի 11-ին Զվարթնոցի տաճարի հարավ-արևմտյան մուտքի մոտ գտնվեց Ռուսա Արգիշտրգի թագավորին (685—635 թթ. մեր թվականությունից առաջ) պատկանող մի սեպագիր արձանագրություն, որ ունի գեղեցիկ փորագրությամբ 47 տող գրություն։ Սա Ռուսայի ամենամեծ արձանագրությունն է։

Սեպագիրը որձաքարի մի տափակ կոթող է, 2,7 մետր բարձրությամբ և 0,63 մ լայնքով, գլուխը կիսաբոլոր է, իսկ ներքևի ծայրը բարակացրած՝ պատվանդանի մեջ հագցնելու համար[1]։

[1] Արձանագրությունն առաջին անգամ հրատարակվել է «Արարատ» ամսագրի մեջ, 1900, էջ 380, այնուհետև տե՛ս Կ. Բասմաճյան, Զվարթնոց եկեղեցու բեռառեհ արձանագրությունը, «Արարատ», 1901, էջ 225, նույնի ֆրանսերեն լեզվով՝ La stèle de

Սեպագիր արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը՝[1]

«Խալդ աստծուն, իր տիրոջը, այս արձանագրությունը Ռուսա Արգիշտորդին[2] կանգնեցրեց։

Խալդի զորությամբ Ռուսա Արգիշտորդին ասում է.—Կուարլինի դաշտի հողերը մշակված չէին, այնտեղ ոչինչ չկար, Խալդ աստվածը հրամայեց, ես այս խաղողի այգին տնկեցի։ Հրամայեցի պատրաստել դաշտեր ցանքսով, մրգատու այգիներ (տնկել), ձեռնարկեցի այնտեղ տաղարի շինության։ (Բլդարունի դետից ջրանցք բերի Ումեշինի անվամբ)։ Երբ (որևէ մեկը) ջրանցքով ոռոգի (հարկագրի ոռոգել) որևէ բան Ռուսա թագավորի այս դաշտում, թող մի այծ մորթվի Խալդ աստծու համար, մի ոչխար գոհարերվի (դաձյալ) Խալդ աստծուն, մի ոչխար՝ Թեյշեբ աստծուն, մի ոչխար՝ Շիվին աստծուն, Sexadie anigu աստծուն... եթե ջուրը esia suili թող մի այծ մորթվի Խալդ աստծու համար, մի ոչխար՝ գոհարերվի (դարձյալ) Խալդ աստծուն, մի ոչխար Թեյշեբ աստծուն, մի ոչխար՝ Շիվին աստծուն, Sexadie anigu աստծուն։



Նկ. 3. Զվարթնոցում գտնված IV - V դարերի բարձրարանդակ· պահպանվել են մարդու ոտները

Ռուսա Արգիշտորդին, հզոր թագավորը, մեծ թագավորը, տիեզերքի թագավորը, Բիայնա երկրի թագավորը, թագավորաց թագավորը, Տոսպ (Տուշպա) քաղաքի իշխանը։

Ռուսա Արգիշտորդին ասում է, ով որ այս արձանագրությունը ոչնչացնի, ով որ ջարդի, ով որ տեղից հանի, ով որ հողի մեջ թաղի, ով որ ջրի մեջ գցի, ով որ այլ ոք ասի՝ «ես եմ կանգնեցրել», ով որ անունս ջնջի՝ իր անունը դնի, լինի նա Բիայնա երկրի (ընակիչ), կամ Աշնամի երկրի (ընակիչ), թող Խալդ, Թեյշեբ, Շիվին աստվածները, (բոլոր) աստվածները չթողնեն (մնա) երկրի վրա ոչ անունը, ոչ ընտանիքը (տոհմը), ոչ սերունդը»։

Zouarthnotz, Recuel de traveaux relatifs la philologie et archeologie Egyptiennes et assyriennes, XXIII, 1901, Հովս. Վ. Մանտալյան. «Բազմավեպ», 1901, էջ 20—24, В. С. Голенищев, Надпись древневанского царя Русы II, Записки Восточного отделения Императорского археологического общества, т. XIII, вып. 4, СПб. 1901, էջ 686—692, C. Lehman, Die neygefundene steleninschrift Rusas II. von Chaldia, Zeitschrift d. Deutsch. Morg. Gies, 65, Band I, I Heft, Leipzig, 1902, էջ 101—113, Н. Н. Мещанинов, Халдоведение, Баку, 1927, էջ 22, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Вестник древней истории, 1953, вып. 4, էջ 231—232;

Զվարթնոցի սեպագիր արձանագրությունը 1936 թվականին մենք տեղափոխեցինք Հոլիսիմեի տաճարը և վերականգնեցինք կոտրված մասի սեպագիր խմբերը։

Մանտալյանի, Լեմանի, Գոլենիշչևի և Բասմաճյանի վերծանությունները հայերենով մեջ է բերել Մեսրոպ վարդ· իր «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ» գրքում. «Ազգագրական հանդես», գիրք 15, 1907, Թիֆլիս, էջ 123—127։

[1] Արձանագրության բովանդակությունը մեջ ենք բերում Միլիարիշվիլու վերծանությամբ, բայց չնչին փոփոխությամբ (մեծ մասամբ բերականական ձևերի ու հապավումների)։

[2] Բոլոր վերծանողները Ռուսայի հայրանունը գրել են երկու բառով Արգիշտու որդի։ Բուն արձանագրության մեջ գրված է մի բառով Ar-gis-ti-xi-ni-se կամ Ar-gis-ti-xi-e, որ ճիշտ համարեցինք հայերենում ևս մի բառով թարգմանել՝ Արգիշտորդի. ինչպես սովորական էր միջին դարերում հայոց մեջ։

Այս արձանագրության մեջ մեզ հետաքրքրող երկու կարևոր հանգամանք կա։ Նախ այն, որ Զվարթնոցի շրջանում, գեռևս մեր թվականությունից առաջ VII դարում Արգիշտորդի Ռուսա թագավորը քաղաք է հիմնադրել («Զևոնարկեցի այնտեղ քաղաքի շինությանն)։ Երկրորդ արձանագրության բովանդակության մեջ կենտրոնական տեղ է հատկացված զոհաբերությունների կարգին։ Ինչպես երևում է, այդ զոհաբերությունները մշտական բնույթ են կրել և կատարվել են բոլոր դեպքերում «Երբ որևէ մեկը ջրանցքով ոռոգի որևէ բանս։

Հավանաբար ամեն տարի այդ զոհաբերություններին նվիրված հատուկ տոնական օր է եղել, երբ կատարել են ջրի պաշտամունքի արարողությունը, արձանագրության մեջ հիշատակված զոհաբերությունների հետ միասին։ Այդ տոնը, որ գոյություն է ունեցել նաև հետագայում, հեթանոսական Հայաստանում, Վարդավառ անվամբ, անցել է քրիստոնեությանը։

Նկ. 4. Զվարթնոցում գտնված IV—V դարերի բարձրաքանդակ



Նկ. 5 Հնագույն շենքերի սյան խարիսխներ՝ գտնված Զվարթնոցի հարավային կողմում

Վարդավառի հանդեսը, որ հայոց եկեղեցու շարժական տոներից մեկն է, հնում կատարվել է նավասարդի առաջին օրը և մեծ շուքով տոնվել է ջուրը միմյանց վրա ցնծությամբ սրսկելով։ Ալիշանի վկայությամբ այդ տոնը կատարում են նաև պարսիկներն իրենց տարեմտի՝ նավասարդի օրը[1]։

Զոհաբերությունները ուրարտացիների ժամանակ կատարվում էին տաճարներում, անպայման քրմերի մասնակցությամբ և հատուկ ծիսակատարությամբ։ Արձանագրությունը, հավանաբար, գրված է եղել Զվարթնոցի տեղում գոյություն ունեցող ուրարտական տաճարի մոտ կամ ներսում և, բացի այն, որ նա իր վրա կրել է Ռուսա Արգիշտորդու կատարած շինարարական

---

[1] Ղ. վ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 305։

Ախալցխայում Վարդավառը տոնվում էր Ծուղրութ գյուղում, որ քաղաքից 4 կիլոմետր էր հեռու։

Այդ օրը քաղաքի բնակչության մեծ մասը վաղ առավոտյան գնում էր այնտեղ. մատաղ էր անում և մինչև երեկո գյուղական եկեղեցու բակում, այգիներում և դաշտերում մեծ կերուխում էր սարքում դհոլ զուռնայով ու սազանդարներով։ Երիտասարդները, տղա ու աղջիկ, ուրախանում էին միմյանց վրա ջուր սրսկելով։

աշխատանքների հիշատակությունը, ունեցել է նաև գործնական նշանակություն՝ աստվածներին զոհաբերություն կատարելու կարգի վերաբերյալ[1]։

Զվարթնոցի սեպագիր արձանագրության կիսաբոլոր գլուխը և վերջավորության պոչուկը ցույց են տալիս, որ նա առաջին կանգնած է եղել պատվանդանի վրա, իսկ միայն մի երեսին գրած լինելը նշան է, որ նրան կարելի էր մոտենալ միայն երեսի կողմից։ Հաշվի առնելով ուրարտացիների սովորությունները, կարող ենք ենթադրել, որ Զվարթնոցի սեպագիրը գրված է եղել տաճարի արտաքին խորշերից մեկում[2]։

Որոշ գրավոր տեղեկություններ կան նաև Զվարթնոցում հեթանոսական տաճարի գոյության մասին, հայերի՝ քրիստոնեություն ընդունելուց անմիջապես առաջ։

Ագաթանգեղոսի վկայությամբ Վաղարշապատի մոտ, դեպի Արտաշատ տանող ճանապարհի վրա է գտնվել արվեստի, դպրության և հարստության տիր (Հերմես) աստծու մեհյանը։ Ինչպես երևում է, այդտեղի քրմերը հայտնի են եղել իբրև երազ մեկնողներ, որովհետև Ագաթանգեղոսը Տիր աստծուն անվանում է Երազացույց, Երազահան, իսկ վայրը՝ «Երազամոյս տեղիսն անուանեալ»։

Ագաթանգեղոսը պատմում է, որ քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունելուց հետո, Գրիգոր Լուսավորիչը Տրդատ թագավորի, իշխանների և հայոց ղորքի մասնակցությամբ ուղղակի է անում հեթանոսական մեհյանները («դրակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնս ի միջոյ, ի բաց կորուսանել»), և այդ մեհյանների շարքում առաջին հերթին հիշատակում է Տիր աստծու տաճարը։

«Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթայ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց. անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»։

Զվարթնոցում գտնված այրված մակերեսով սյան խարիսխները հավանաբար պատկանել են Տիր աստծու մեհյանին և քրիստոնեություն ընդունելու միջոցին էլ հենց այրվել են, երբ մեհյանը քանդվել ու հրդեհվել է։

Ե. Զվարթնոց անունը

Սերեռոր Զվարթնոցի կառուցումը թեև կապում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ և գրում է, որ Ներսեհն իր եկեղեցին շինեց Վաղարշապատի եկեղեցիների մոտ, այն ճանապարհի վրա, որով, ասում են, Տրդատ թագավորն ընդառաջ գնաց ս. Գրիգորին, բայց այնուհետև ավելացնում է, որ այդ եկեղեցին նվիրեց Երկնավոր զվարթուններին անվան, որոնք երևացել էին նրա տեսիլքի մեջ։

---

1 Ուստա Արգիշտորդու կառուցած չրանցքը պահպանվել է մինչև մեր օրերը և այժմ էլ Էջմիածնի հողերը ոռոգող գլխավոր չրանցքներից մեկն է։ Նա սկիզբ է առնում Հրազդան գետից, Շենգավիթի մոտերքում, լեռ քարի մեջ փորված թունելն անցնելով, դուրս է գալիս Երևանից էջմիածին տանող խճուղու կողքը և մի քանի ոլորապտույտներ գործելով հասնում է մինչև էջմիածին՝ ճանապարհին ոռոգելով Արգավանդի, Փարաքարի և էջմիածնի հողերը։ Ջրանցքը վերակառուցվեց և մեծացվեց Սովետական իշխանության օրով՝ 20-ական թվականներին։

2 1916 թվականին Ն. Մառը և Հ. Օրբելին պեղումներ կատարեցին Վանում և Վանա բերդի հյուսիսային կողմում, խաչնա կապուտ խորշում բաց արին Սարդուր Արգիշտորդու տարեգրությունը, որ ուրարտական ամենամեծ սեպագիր արձանագրությունն է։ Այդ արձանագրությունը գրված է եղել խորշի մեջ, իր պատվանդանի վրա, որ գարձյալ արձանագրած էր։

Բ. Պիոտրովսկին ենթադրել է, որ Զվարթնոցի սեպագիր արձանագրությունը սկզբում գրված է եղել Կարմիր-բլուրում։ Այդ ենթադրությունը հավանական չէ, որովհետև Կարմիր-բլուրը չի կապվում արձանագրության մեջ հիշատակվող որևէ երևույթի հետ՝ ոչ չրանցքի սկզբնավորության և ոչ էլ ոռոգվող դաշտերի։ Ինչ կապ կարող էր ունենալ պատերազմի աստծու անվանը նվիրված ռազմական մի ամրոց, ինչպիսին էր Կարմիր-բլուրը, Կուարլինի երկրի դաշտերի ոռոգման և աստվածներին զոհաբերվող կենդանիների հետ։

3 Ագաթանգեղեայ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 395։ Հմմտ. Մ ե ս ր ո պ վ ա ր դ., էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, Ա. գիրք 15, էջ 99, Բ ա ր գ ո ւ ղ ի մ ե ո ս ե պ., Խորենացուն Խորենացով պետք է հասկանալ, Թիֆլիս, 1902, էջ 150—151, ինչպես նաև՝ Ա. Գ. Ա ր ա հ ա մ յ ա ն, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 38։

«Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոնց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն»[1]։

Բացի Սեբեոսից, ոչ մի մատենագիր Զվարթնոց անունը չի տալիս Ներսեսի շինած եկեղեցուն, թեև նրանք գրեթե բոլորն էլ ծանոթ են եղել Սեբեոսի պատմությանը։

Նշանակում է, հետագայի (IX—XIV դդ.) պատմագիրները ոչ թե անգիտակ լինելու պատճառով, այլ դիտավորյալ կերպով չեն հիշատակել Զվարթնոց անունը, որ Սեբեոսից հետո, միայն մեր ժամանակներում վերակենդանացավ շնորհիվ Շահխաթունյանցի երկհատոր գրքի և մանավանդ Զվարթնոցը պեղող Խաչիկ վարդապետի, որ ոչ միայն եկեղեցին էր անվանում այդպես, այլ ինքն իրեն կոչում էր Խաչիկ Զվարթնոց։

Լուսավորչի տեսիլքի մեջ ըստ ավանդության երկնային զորքը որևէ էական գեր չի խաղացել, այլ միայն հանդիսավոր բնույթ է տվել նրան։ Այստեղ նույնիսկ չեն հիշատակված հրեշտակների դասերի անունները, որպեսզի Զվարթնոցի տաճարը նրանցից մեկի անունով կոչվելու հիմք լիներ։

Նշանակում է, Սեբեոսը աշխատել է որևէ կերպ պատճառաբանել Զվարթնոց անվան գոյությունը՝ կապելով այն Լուսավորչի տեսիլքի հետ։

Մեսրոպ Տեր-Մովսիսյանը կարծում է, թե եկեղեցին սկզբում Ներսեսն անվանել է Զվարթնոց, բայց հետո, երբ Գրիգոր Լուսավորչի ոսկորները Թորդանից փոխադրել են Զվարթնոց և թաղել չորս սյուների տակ, այդ առթիվ եկեղեցին վերանվանել են ս. Գրիգոր։

Ինչպես վերևում նշեցինք, Գրիգոր Լուսավորչի ոսկորները Զվարթնոց փոխադրելը հետագայում հորինված ավանդություն է և իրականության հետ կապ չունի, ուստի վերոհիշյալ կարծիքը զուրկ է հիմքից[2]։

Իր հոդվածի ծանոթագրության մեջ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը կասկած է հայտնել այն մասին, որ Զվարթնոց անունը կարող է կապ ունենալ Գրիգոր Լուսավորչի անվան հետ[3]։ Այս տեսակետը պաշտպանել է բանասեր Թադեոս Ավդալբեգյանը[4]։

Ինչպես հայտնի է, Գրիգոր անունը ծագում է հունարենից և նշանակում է արթուն։ Գրիգոր անձնանունը հունարենում գրվում է Γρηγόριος, որ առաջացել է γρηγορέω արթուն լինել, զգոն լինել, հսկել բառից[5]։

Այսպիսով, Զվարթնոց և Գրիգոր բառերն իրար մոտենում են, որովհետև հունարենում նույն արմատից են ծագել, բայց Ներսես Տայեցու կառուցած եկեղեցու Զվարթնոց և Գրիգոր անունների ծագման նմանությունը համարում ենք պատահականություն, որովհետև այդ բառերի իմաստը հայերենում բոլորովին այլ է։

Զվարթուն-ը, որ Զվարթնոց-ի եզակի թվի ուղղական հոլովն է, համապատասխանում է հունարեն Ἐγρήγορος բառին, որ հատկացված է եղել բարի ոգիների մի դասին, որոնք անքուն հսկում են կատարել։

Հայոց հին հեթանոսական կրոնի մեջ ևս զվարթունները բարի ոգիների մի դասն են հանդիսացել, որոնք նույն պարտականությունն են կատարել, ինչ որ հունական դիցաբանության մեջ։

Զևոնդ Ալիշանը հայոց հեթանոսական կրոնի մասին խոսելիս, հենվելով մատենագիրների տվյալների վրա, ասում է, որ զվարթունները, «հսկող ևս անուանին» և նրանց դնում է հեթանոսական կրոնի բարի ոգիների շարքը։

Աբմատական բառարանի մեջ Ա. Աճառյանը Զուարթուն բառը բացատրում է արթուն, զգաստ, ժիր, իսկ զուարթունի հրեշտակ առումը՝ հենվելով Ն. Մառի մեկնության վրա, համարում է քրիստոնեության շրջանում թարգմանաբար ասորերենից առաջացած։ Ստեփանոս Մալխասյանցն իր բացատրական բառահատոր բառարանում զուարթուն բառը հոգնակի գործածությամբ մեկնաբանում է արթուն հսկողներ։

Հայերի քրիստոնեություն ընդունելուց հետո զուարթուններ-ի դասը ոչ թե ջնջվեց, այլ վեր ածվեց հրեշտակների մի խմբի, որ ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական կրոնի մեջ, արթուն մնալու և հսկելու պարտականությունն էր կատարում։

Նոր Հայկազյան բառգրքում[1] զուարթուն բառի բացատրության մեջ հին մատենագիրներից

[1] Սեբեոս, էջ 192։
[2] «Ազգագրական հանդես», գիրք XV, էջ 112—113։
[3] Անդ. էջ 111-ի ծոցատակի ծանոթությունը։
[4] Էջմիածին ամսագիր, 1958, Բ թիվ, էջ 51։
[5] Древнегреческо-русский словарь, составил И. Х. Дворецкий, т. I, М. 1958
Նույնն է վկայում նաև Նոր Հայկազյան բառգիրքը։ Տե՛ս անդ՝ զուարթանամ բառը։
[1] «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց», էջ 203։
[2] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. I։

մի շարք վկայություններ են բերված և ցույց է տրված, որ այդ բառը «սեպհականելի անուն» հոգեղէն պաշտօնէից առաջուց այսինքն հրեշտակաց։ Շնորհալին ասում է՝ «Զուարթուն կոչին հրեշտակք, որ են անբուն և լուրջ երեսօք»։ Գր. Նարեկացին նրանց անվանում է «Զուարթունք անհիրտելիք» և այլն։

Զվարթնոցը Գրիգոր Լուսավորչի անվան այլակերպությունը լինելու դեպքում երբեք չէր կարող հոգնակի թվով հանդես գալ, որովհետև Գրիգորը եզակի մարդ է, այն էլ խիստ որոշ է. այդ պարագային Ներսես Տայեցու կառուցած եկեղեցին պետք է կոչվեր ոչ թե Զվարթնոց (Զվարթունների), այլ Զուարթնոյ (Զվարթուն) եկեղեցի, ոչ թե Գրիգորների, այլ Գրիգորի։

Զվարթնոցը, հավանաբար, տեղի հեթանոսական ժամանակների անունն է։

Զվարթնոցի հեթանոսական կուլտը նվիրված է եղել գիշերային խավարի ժամանակ արթուն հսկող բարի ոգիների պաշտամունքին։

Իսկ որ ուրարտական ջրի պաշտամունքի տաճարը հեթանոս հայերի օրով փոխակերպվել է հսկող ոգիների պաշտամունքի, այդ բացատրվում է նրանով, որ հեթանոսի հասկացողությամբ մարդիկ միայն ջրով կարող էին մարդագործվել ու ազատվել չար ոգիների ազդեցությունից։

Հեթանոսության օրով ջրի օգնությամբ չար ոգիներից ազատագրվելու ծեսը կատարվում էր բարի ոգիների հսկողության ներքո, որոնք կոչվում էին զվարթուններ։ Այդ հասկացողությունից էլ առաջ է եկել Զվարթնոց անունը։

ЗВАРТНОЦ

КАРО КАФАДАРЯН

(Резюме)

В своей статье автор приходит к следующим выводам:

1. Стиль и строение звартноцского храма не были чужды для Армении. Архитектурная форма и конструкции возникли в Армении в VII веке и просуществовали до первой половины XI века.

2. Звартноц был сооружен не для распространения греческого вероисповедания, как предполагал Г. Левонян, а как кафедральный собор и резиденция армянского католикоса.

3. Свидетельство Себеоса о скрытом греческом вероисповедании Нерсеса Тайеци не соответствует действительности и является результатом тенденциозного подхода к этому вопросу.

4. Неверной является точка зрения, согласно которой причиной разрушения Звартноца являются недостатки его конструкции. По свидетельству Киракоса Гандзакеци и Мхитара Анеци, звартноцский храм стоял более трехсот лет и был разрушен арабами в конце X века.

5. Археологические данные свидетельствуют, что в окрестностях Звартноца существовало поселение круглого плана городского типа, основанное Нерсесом Тайеци. Оно имело городские стены диаметром 1 км, толщиной 1,8 м.

6. Из содержания урартской клинообразной надписи, найденной в Звартноце, можно предположить, что она стояла около храма и была предназначена для жертвоприношений.

7. До строительства Звартноца Нерсесом Тайеци на месте храма существовали древняя церковь и другие постройки, относящиеся к IV—V вв.

8. Название Звартаоц не было присвоено храму Нерсесом и не является трактовкой Григория в переводе с греческого, как предполагают некоторые исследователи. Его следует связывать с языческим культом бдящих сил, существовавшем ранее на месте будущего храма.

9. Не стремление к славе заставило Нерсеса Тайеци построить большую церковь и резиденцию вне города Вагаршапата или столицы Армении Двина, а в первую очередь желание искоренить существовавшие в Звартноце языческие представления. Некоторую роль играло и то обстоятельство, что, как правильно предполагал Т. Тораманян, свою строительную программу Нерсес в Звартноце мог осуществить беспрепятственно.